

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE
AND
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Սուսաննա Բաղդասարյանը
Կարինե Բալայանը

ԿՈԿԻՆԱԿԻՍՆ ԸՆԴԴԵՄ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ

CASE OF KOKKINAKIS v. GREECE

Դատարանի

1993թ. ապրիլի 19-ի վճիռը

Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, համաձայն Մարդու իրավունքների
և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի
(«Կոնվենցիա») 43-րդ հոդվածի, ինչպես նաև Դատարանի կանոնակարգի
համապատասխան կանոնների, նիստ գումարելով որպես Պալատ, կազմով՝ պրն Ռ.
Ռիսդալի, Նախագահ, պրն Ռ. Բերնհարդտի,

պրն Լ.- Ի. Փետիտի, պրն Ջ. Դե Մեյերի, պրն Ն. Վալտիկոսի, պրն Ս.Կ. Մարտենսի,
պրն Ի. Ֆոյգելի, պրն Ա.Ն. Լուիզուի, պրն Մ.Ա. Լոպես Ռոչայի,
ինչպես նաև պրն Մ. - Ա. Էյսենի, Քարտուղար, և պրն Հ. Պետզոլդի, քարտուղարի
տեղակալ,

1992թ. նոյեմբերի 27-ի և 1993թ. ապրիլի 19-ի դեմփակ խորհրդակցություններից
հետո,

կայացրել է հետևյալ վճիռը, որն ընդունվել է 1993թ. ապրիլի 9-ին:

ՎԱՐՈՒՅԹԸ

1. Գործը Դատարան է հանձնվել Մարդու իրավունքների եվրոպական
հանձնաժողովի կողմից («Հանձնաժողով») 1992թ. փետրվարի 21-ին՝ Կոնվենցիայի
32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում:
Գործի համար առիթ է հանդիսացել 1988թ. օգոստոսի 22-ին, 25-րդ հոդվածի
համաձայն, Հունաստանի քաղաքացի պրն Սինոս Կոկինակիսի կողմից Հունաստանի
Հանրապետության դեմ Հանձնաժողովին ներկայացրած գանգատը (թիվ 14307/88):

Հանձնաժողովի խնդրանքը հիմնվում էր 44-րդ և 48-րդ հոդվածների և այն
հայտարարության վրա, որով Հունաստանը ճանաչել է Դատարանի պարտադիր
իրավագործությունը (46-րդ հոդված): Խնդրանքի նպատակը որոշման կայացումն էր
առ այն, թե արդյոք գործի հանգամանքները վկայում են պատասխանող
Կառավարության կողմից 7-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով նախատեսված
պարտավորությունների խախտումների մասին:

2. Ի պատասխան Դատարանի կանոնակարգի 33-րդ կանոնի 3-րդ (դ) կետի
համաձայն արված հարցմանը՝ դիմողը հայտարարել է, որ ցանկանում է մասնակցել
դատավարությանը, և որ նշանակել է փաստաբան, որը պետք է ներկայացնի իրեն (30-
րդ կանոն):

3. Պալատի կազմում ex officio ընդգրկվել են պրն Ն. Վալտիկոսը՝ Հունաստանից
ընտրված դատավոր (Կոնվենցիայի 43-րդ հոդված), և պրն Լ. Ռիսդալը, Դատարանի
նախագահը (21-րդ կանոնի 3 (բ) կետ): 1992թ. փետրվարի 27-ին, Քարտուղարի
ներկայությամբ, Նախագահը վիճակահանությամբ ընտրել է Պալատի կազմի մյուս յոթ
դատավորներին, այն է՝ պրն Ռ. Բերնհարդտին, պրն Լ.- Ի. Փետիտին, պրն Ջ. դե
Մեյերին, պրն Ս.Կ. Մարտենսին, պրն Ի. Ֆոյգելին, պրն Ա.Ն. Լուիզուին, պրն Մ.Ա.
Լոպես Ռոչային (Կոնվենցիայի 43-րդ հոդվածի և Կանոնակարգի 21-րդ կանոնի 4-րդ
կետի համաձայն):

4. Պրն Ռիսդալը, ստանձնելով Պալատի նախագահի պարտականությունները (21-րդ կանոնի 5-րդ կետ), Քարտուղարի միջոցով խորհրդակցել է Հունաստանի կառավարության ներկայացուցչի («Կառավարություն»), Հանձնաժողովի պատվիրակի և դիմողի փաստաբանի հետ՝ վարույթի կազմակերպման վերաբերյալ (37-րդ կանոնի 1-ին կետ և 38-րդ կանոն): Արդյունքում ընդունված հրամանի համաձայն՝ 1992թ. օգոստոսի 12-ին քարտուղարն ստացել է դիմողի և Կառավարության գրավոր բացատրությունները: Սեպտեմբերի 17-ին Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրել է Քարտուղարին, որ պատվիրակը իր բացատրությունները կներկայացնի լսումների ժամանակ:

Օգոստոսի 13-ին Հանձնաժողովը, քարտուղարի խնդրանքով, Կառավարության առաջարկի հիման վրա ներկայացրել է մի շարք փաստաթղթեր:

5. Նախագահի որոշման համաձայն տեղի է ունեցել դռնբաց նիստ Մարդու իրավունքների Պալատում, Ստրասբուրգում՝ 1992թ. նոյեմբերի 25-ին: Մինչ այդ Դատարանը գումարել էր նախապատրաստական նիստ:

Դատարանի առջև հանդես են եկել՝
(ա) Կառավարության անունից՝

պրն Պ. Գեորգակոպուլոսը, գլխավոր խորհրդական,
պետական իրավական խորհրդատու
ներկայացուցչի

պատվիրակ,

պրն Ա. Մարինոս, Գերագույն
վարչական դատարանի դատավոր,

փաստաբան,

(բ) Հանձնաժողովի անունից՝

պրն Ս. Լ. Ռոզակիս

պատվիրակ,

(գ) դիմողի անունից՝

պրն Պ. Վեզլերիս, dikigoros (փաստաբան) և
Emeritus պրոֆեսոր, Աթենքի համալսարան,
պրն Պ. Բիտսաքսիս dikigoros (փաստաբան)

*փաստաբան,
խորհրդական:*

Դատարանը լսել է պրն Գեորգակոպուլոսին և պրն Մարինոսին՝ կառավարության կողմից, պրն Ռոզակիսին՝ Հանձնաժողովի կողմից, ինչպես նաև պրն Վեզլերիսին և պրն Բիտսաքսիսին՝ դիմողի կողմից: Դատարանը նաև լսել է իր հարցերի պատասխանները:

ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. Գործի հանգամանքները

6. Պրն Մինոս Կոկինակիսը Հունաստանի քաղաքացի է՝ թոշակառու գործարար, ծնված 1919թ. Միտիայում (Կրետ) ուղղափառ քրիստոնյաների ընտանիքում: 1936թ. Եհովայի վկա դառնալուց ի վեր, նա ձերբակալվել է ավելի քան վաթսուն անգամ՝ հոգեորսության մեղադրանքով: Նա նաև մի քանի անգամ մեկուսացվել և բանտարկվել է:

Կրոնական հարցերում իր գործունեության համար վարչական իշխանությունների կարգադրությունների հիման վրա ներկալումները նա անց է կացրել Էգեյան ծովի տարբեր կղզիներում (1938թ. տասներեք ամիս Անագոսում, 1940թ. վեց ամիս Միլոսում և 1949թ. տասներկու ամիս Մակրոնիսոսում):

Դատարանների կողմից նշանակված ազատազրկման ժամկետների համար հիմք էին հանդիսացել հոգեորսության հետ կապված նրա գործունեությունը (1939թ. նա երեք անգամ դատապարտվել է երկուս ու կես ամիս տևողությամբ բանտարկության՝ հանդիսանալով Մետաքսասի Կառավարության օրենքների հիման վրա դատապարտված՝ առաջին Եհովայի վկան (տե՛ս ստորև՝ կետ 16), 1949թ. նա դատապարտվել էր չորս ու կես ամիս տևողությամբ բանտարկության և 1962թ.՝ երկու ամիս տևողությամբ բանտարկության), կրոնական շարժառիթներով զինվորական ծառայությունից հրաժարվելը (1941թ. տասնութ ու կես ամիս), ինչպես նաև մասնավոր տանը կրոնական հավաք կազմակերպելը (վեց ամիս՝ 1952թ.):

1960թ.-ից մինչև 1970թ. ընկած ժամանակահատվածում նա ձերբակալվել է դատական կարգով հետապնդվել է չորս անգամ, սակայն ոչ մի անգամ չի դատապարտվել:

7. 1986թ. մարտի 2-ին դիմողը և նրա կինն այցելել են Սիտիայում բնակվող տկն Կիրիակակիին և գրուցել նրա հետ: Տկն Կիրիակակիի ամուսինը, որը ծառայում էր տեղի ուղղափառ եկեղեցում, ահազանգել է ոստիկանությանը, որը ձերբակալելով պրն և տկն Կոկինակիսներին՝ նրանց տեղափոխել է տեղի ոստիկանության բաժանմունք, որտեղ էլ նրանք անց են կացրել 1986թ. մարտի 2-3-ի գիշերը:

Ա. Վարույթը Լասիտիի քրեական դատարանում

8. Դիմողը և նրա կինը հետապնդվել են դատական կարգով՝ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի հիման վրա, համաձայն որի նրանց ներկայացվել է հոգեորսության մեղադրանք (տե՛ս ստորև՝ կետ 16), և նրանք կանգնել են Լասիտիի քրեական դատարանի առջև, որը լսել է գործը 1986թ. մարտի 20-ին:

9. Մերժելով այդ օրենքի 4-րդ բաժնի՝ հակասահմանադրական լինելու վերաբերյալ առարկությունը, քրեական դատարանը լսել է տեր և տիկին Կիրիակակիների, պաշտպանության մեկ վկայի և երկու մեղադրյալների ցուցմունքները և կայացրել է նույն վճիռը.

« [Մեղադրյալները], որոնք պատկանում են Եհովայի վկաներ աղանդին, փորձել են աղանդավոր դարձնել Կիրիակակի ամուսիններին, և ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ միջամտել են ուղղափառ քրիստոնյաների կրոնական հավատքին՝ այն խարխլելու մտադրությամբ, օգտվելով վերջիններիս անփորձությունից, ցածր մտավոր կարողություններից և միամտությունից: Մասնավորապես, նրանք զնացել են [տկն Կիրիակակիի] տուն և ... ասել նրան, որ բերել են բարի լուրեր. համառությամբ՝ նրանք վերջապես ստացել են տուն մտնելու թույլտվություն և այնուհետև սկսել են կարդալ հատվածներ Աստվածաշնչից՝ հղում անելով դրախտի թագավորին, դեռևս տեղի չունեցած, սակայն շուտով սպասվող իրադարձություններին և այլն: Իրենց հմուտ և խելամիտ բացատրություններով խրախուսել են նրան ... փոխել ուղղափառ քրիստոնեական հավատքը»:

Դատարանը մեղավոր է ճանաչել տեր և տիկին Կոկինակիսներին հոգեորսության համար և դատապարտել է նրանց չորս ամիս ազատազրկման, որը փոխարինվել է (համաձայն Քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի) մեկ օր ազատազրկման դիմաց 400 դրախտ նյութական տուգանքի և 10.000 դրախտ

տուգանքի նշանակմամբ: Քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն դատարանը նաև որոշում է կայացրել առգրավելու և ոչնչացնելու այն չորս գրքույկները, որ նրանք հույս ունեին վաճառել տկն Կիրիակակիին:

Բ. Վարույթը Կրետեի վերաքննիչ դատարանում

10. Պրն և տկն Կոկինակիսներն այս վճիռը բողոքարկել են Կրետեի վերաքննիչ դատարանում (Efetio): Վերաքննիչ դատարանը չեղյալ է հայտարարել տկն Կոկինակիսի դատապարտումը, սակայն պահպանել է նրա ամուսնունը՝ ազատագրված ժամկետը կրճատելով երեք ամսվա, որը փոխարինվել է օրական 400 դրախմ նյութական տուգանքով: 1987թ. մարտի 17-ին կայացրած դատավճռում դատարանը ներկայացրել է հետևյալ հիմնավորումը.

«... ապացուցվել է, որ նպատակ ունենալով տարածել Եհովայի վկաներ աղանդի հավատքը, որին պատկանում է մեղադրյալը, նա փորձել է, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, միջամտել իր հավատքից տարբերվող հավատքի՝ ուղղափառ քրիստոնեական հավատքի հետևորդի կրոնական պատկերացումներին, մտադրություն ունենալով փոխելու այդ պատկերացումները՝ օգտվելով նրա անփորձությունից, ցածր մտավոր կարողություններից և միամտությունից: Մասնավորապես, նկարագրական մասում նշված տարածքում և ժամանակ նա այցելել է տկն Գեորգիա Կիրիակակիին և ասելով նրան, որ բերել է բարի լուրեր, ստիպել է վերջինիս նրան ներս թողնել, և ներս մտնելուց հետո սկսել է պատմել նրան Օլաֆ Պալմ անունով քաղաքական գործչի մասին և արտահայտել խաղաղասիրական մտքեր և տեսակետներ: Այնուհետև նա հանել է մի գրքույկ, որում ներկայացվում և մեկնաբանվում էին վերը նշված աղանդի հետևորդների խոստովանությունները հավատքի մասին, և սկսել էր կարդալ հատվածներ Սուրբ գրքից՝ դրանք հմտորեն վերլուծելով այնպես, որ չունենալով պատշաճ գիտելիքներ դոկտրինայի վերաբերյալ՝ քրիստոնյա կինը չէր կարող վիճարկել այդ մեկնաբանությունները: Միևնույն ժամանակ, նա առաջարկել է կնոջը բազմաթիվ նմանատիպ գրքեր և համառորեն փորձել է, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, խարխլել նրա հավատքը: Հետևաբար, նա պետք է մեղավոր ճանաչվի վերոնշյալ մեղադրանքով՝ համաձայն ստորև ներկայացված նկարագրական մասի: Մինչդեռ նրա կինը՝ Եղիսաբեթը, պետք է արդարացվի՝ հաշվի առնելով, որ իր ամուսնու գործած հանցանքին նրա հանցակից լինելն ապացուցված չէ, և որ նա ընդամենն ուղեկցում էր իր ամուսնուն...»:

Վերաքննիչ դատարանի դատավորներից մեկը չի համաձայնել և նրա կարծիքում, որը կցվել է վճռին, մասնավորապես նշված է.

«... առաջին մեղադրյալը նույնպես պետք է արդարացվեր, քանի որ ապացույցներից և ոչ մեկը ... չէր վկայում, որ Գեորգիա Կիրիակակին հատկապես անփորձ էր ուղղափառ քրիստոնեական ուսմունքի հարցերում՝ ամուսնացած լինելով հոգևորականի հետ: Չկար նաև ապացույց առ այն, որ նա ցածր մտավոր կարողությունների տեր էր կամ այնքան միամիտ, որ մեղադրյալը կարողանար դրանից օգտվելով... համոզել նրան հարել Եհովայի վկաներ աղանդին»:

Համաձայն 1987թ. մարտի 17-ի նիստի արձանագրության՝ տկն Կիրիակակին տվել է հետևյալ ցուցմունքները.

«Նրանք անմիջապես սկսեցին խոսել ինձ հետ Օլաֆ Պալմի և նրա խաղաղասեր լինելու կամ չլինելու մասին, ինչպես նաև այլ թեմաներով, որոնք ես չեմ կարողանում

հիշել: Նրանք խոսում էին ինձ հետ այնպիսի բաների մասին, որոնց իմաստը ես լավ չէի հասկանում: Դա ոչ թե քննարկում էր, այլ մեծախոսություն նրանց կողմից: ... Եթե նրանք ասած լինեին ինձ, որ Եհովայի վկաներ են, ապա ես նրանց ներս չէի թողնի: Ես չեմ հիշում, թե նրանք ինձ հետ խոսել են դրախտի թագավորության մասին, թե՛ ոչ: Նրանք մնացին մեր տանը մոտավորապես տասը ռոպե կամ քառորդ ժամ: Այն, ինչի մասին նրանք խոսում էին, իր էությանը կրոնական էր, սակայն ես չգիտեմ, թե նրանք ինչի համար էին ինձ այդ ամենը ասում: Սկզբում ես չէի կարող իմանալ, թե որն է նրանց այցելության նպատակը: Միգուցե այն ժամանակ նրանք ինձ ասել են ինչ-որ բաներ՝ նպատակ ունենալով խարխլել իմ հավատքը...: [սակայն] քննարկումը որևէ ազդեցություն չի ունեցել հավատքի վերաբերյալ իմ ունեցած պատկերացումների վրա...»:

9. Վարույթը Վճռաբեկ դատարանում

11. Պրն Կոկինակիսը բողոքարկել է իրավունքի հարցերի կապակցությամբ: Նա inter alia հայտարարել է, որ թիվ 1363/1938 օրենքի դրույթները հակասում են Սահմանադրության 13-րդ հոդվածին (տե՛ս ստորև՝ կետ 13):

12. Վճռաբեկ դատարանը (Arios Pagos) մերժել է զանգատը 1988թ. ապրիլի 22-ին: Հակասահմանադրականությանը վերաբերող պնդումը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ.

«Թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժինը, փոխարինվել է թիվ 1672/1939 օրենքի 2-րդ բաժնով, որը սահմանում է Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածների կիրառումը և ուժի մեջ էր դրվել համաձայն այն ժամանակ գործող 1911թ. Սահմանադրության, և որի 1-ին հոդվածը արգելում էր հոգեորությունը և որևէ այլ տիպի միջամտությունը Հունաստանում գերիշխող կրոնին, այն է՝ քրիստոնեական արևելյան ուղղափառ եկեղեցուն, ոչ միայն չի հակասում 1975թ. Սահմանադրության 13-րդ հոդվածին, այլ լիարժեքորեն համատեղելի է Սահմանադրության հետ, որը ճանաչում է կրոնական հարցերում խղճի ազատության անձեռնմխելիությունը և թույլ է տալիս դավանել ցանկացած հայտնի կրոն: Նույն Սահմանադրության ձևական դրույթներից մեկն արգելում է աղանդավորությունը, քանի որ աղանդավորությունն ընդհանրապես արգելված է՝ անկախ այն հանգամանքից, թե որ կրոնի դեմ է այն ուղղված, ներառյալ Հունաստանում գերիշխող քրիստոնեական արևելյան ուղղափառ եկեղեցին՝ համաձայն 1975թ. Սահմանադրության 3-րդ հոդվածի»:

Նա նաև նշել է, որ Կրետեի վերաքննիչ դատարանը մանրամասնորեն պատճառաբանել է իր դատավճիռը և գործել է 1975թ. Սահմանադրությանը համապատասխան՝ վիճարկվող դրույթները կիրառելիս: Չհամընկնող կարծիք հայտնած անդամի կարծիքով՝ վճռաբեկ դատարանը պետք է բեկաներ ստորադաս դատարանի դատավճիռը՝ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի սխալ կիրառման հիմքով, քանի որ նա չի անդրադարձել այն խոստումներին, որոնցով մեղադրյալը ենթադրաբար փորձել է միջամտել տկն Կիրիակակի կրոնական համոզմունքներին, ինչպես նաև չի ներկայացրել որևէ մանրամասնություն տկն Կիրիակակի անփորձության կամ մտավոր ցածր կարողությունների մասին:

II. Համապատասխան ներպետական օրենսդրությունը և պրակտիկան

Ա. Օրենսդրական դրույթներ

1. Սահմանադրությունը

13. 1975թ. Սահմանադրության՝ գործին առնչվող հոդվածներում մասնավորապես շարադրված է.

Յոթերորդ 3. «1. Զուգահեռաբանում գերիշխող կրոնը քրիստոնեական արևելյան ուղղափառ եկեղեցին է: Զուգահեռաբանում ուղղափառ եկեղեցին, որն իր գլուխն է համարում Մեր Տեր Յիսուս Քրիստոսին, իր ուսմունքով անքակտելիորեն միավորված է Կոնստանդնուպոլսի Մեծ եկեղեցու և բոլոր այն քրիստոնեական եկեղեցիների հետ, որոնք առնչվում են վերջինիս հետ (omodoxi), անփոփոխ կերպով, այլ եկեղեցիների նման, հետևում է ուղղափառ և սինոդիկ կանոններին և սրբազան ավանդույթներին: Այն ավտոկեֆալ է և ղեկավարվում է բոլոր ծառայող եպիսկոպոսներից կազմված Սուրբ Սինոդի կողմից, ինչպես նաև մշտական Սուրբ Սինոդի, որը բխում է նախորդից և կազմավորվում է համաձայն եկեղեցու կանոնակարգի և ըստ 1850թ. հունիսի 29-ի Պատրիարքական հատորի դրույթների և 1928թ. սեպտեմբերի 4-ի Սինոդիկ ակտի հիման վրա:

2. Պետության որոշ շրջաններում գործող եկեղեցական ռեժիմը չպետք է համարվի վերոհիշյալ դրույթներին հակասող:

3. Սուրբ Գրքի տեքստն անփոփոխելի է: Չի կարող կատարվել պաշտոնական թարգմանություն լեզվի որևէ այլ ձևի՝ առանց ավտոկեֆալ Զուգահեռաբանում եկեղեցու և Պոլսո Մեծ եկեղեցու նախնական համաձայնության:

Յոթերորդ 13. «1. Կրոնական հարցերում խղճի ազատությունն անձեռնմխելի է: Անձնական և քաղաքական իրավունքներից օգտվելը չպետք է կախված լինի անհատի կրոնական համոզմունքներից:

2. Յուրաքանչյուր հայտնի կրոնի դավանելը պետք է լինի ազատ. անհատները պետք է հնարավորություն ունենան ազատորեն կատարելու իրենց պաշտամունքային ծեսերը՝ առանց որևէ միջամտության, և օրենքի պաշտպանության ներքո: Պաշտամունքային ծեսերը չպետք է վտանգեն հասարակական կարգը և հասարակական բարքերը: Զոգեորությունն արգելված է:

3. Բոլոր հայտնի դավանանքների քահանաները պետք է գտնվեն պետության կողմից միևնույն վերահսկողության ներքո և պետք է ունենան միևնույն պարտականությունները, ինչ գերիշխող կրոնը:

4. Ոչ ոք չի կարող ազատվել պետության նկատմամբ պարտականությունները կատարելուց կամ հրաժարվել օրենքին ենթարկվելուց՝ կրոնական համոզմունքներից ելնելով:

5. Ոչ մի երդում չի կարող պահանջվել՝ բացի օրենքով նախատեսվածից, որի ձևը նույնպես սահմանվում է օրենքով:

14. Քրիստոնեական արևելյան ուղղափառ եկեղեցին, որն օտարերկյա տիրապետության գրեթե չորս դարերի ընթացքում խորհրդանշել է հունական մշակույթի և լեզվի պահպանումը, գործում մասնակցություն է ունեցել հույն ժողովրդի ազատագրական պայքարում, այնքանով, որ հելենիզմը ինչ-որ իմաստով նույնացվում էր ուղղափառ հավատքի հետ:

1833թ. հուլիսի 23-ի թագավորական հրամանագիրը, որը վերնագրված էր «հունական եկեղեցու անկախության հռչակագիր», ուղղափառ եկեղեցին սահմանում էր որպես «ավտոկեֆալ»: Զուգահեռաբանում հետագա սահմանադրություններն անդրադարձել են եկեղեցուն՝ որպես «գերիշխող»: Բնակչության ճնշող մեծամասնությունը դավանում է այս կրոնը, և համաձայն հունական համոզմունքների, ուղղափառ եկեղեցին և՛ de jure, և՛ de facto հանդիսանում է հենց պետության կրոն, որի վարչական և կրթական բավականին մեծաքանակ գործառույթները (ամուսնության և ընտանիքի իրավունք, պարտադիր կրոնական կրթություն, Կառավարության անդամների երդումներ և այլն) իրականացվում են հիմնականում ուղղափառ եկեղեցու կողմից: Նրա դերը հասարակական կյանքում արտացոլված է, ի թիվս այլոց, նաև այն հանգամանքում, որ կրթության և կրոնական հարցերով

Նախարարը ներկա է գտնվում եկեղեցական աստիճանակարգի այն նիստերին, որոնց ժամանակ ընտրվում է Աթենքի արքեպիսկոպոսը, ինչպես նաև նրանում, որ եկեղեցական իշխանությունները մասնակցում են բոլոր պաշտոնական պետական իրադարձություններին: Հանրապետության Նախագահը պաշտոնն ստանձնելիս իր երդումը տալիս է ուղղափառ ծեսի համաձայն (Սահմանադրության 33-րդ հոդվածի 2-րդ կետ), իսկ պաշտոնական օրացույցի համար հիմք է հանդիսանում քրիստոնեական արևելյան ուղղափառ եկեղեցու օրացույցը:

15. Օտտո առաջինի օրոք (1832-62) ուղղափառ եկեղեցին, որը մինչ այդ երկար ժամանակ հանդես է եկել ընդդեմ ավետարանչական եկեղեցու անունից Աստվածաշնչի միության քարոզչության, որն ուղղված էր կրոսեր տարիքի ուղղափառ հավատքի դպրոցականներին, կարողացավ հասնել նրան, որպեսզի առաջին Սահմանադրության մեջ (1844) ավելացվի մի դրույթ, որն արգելում էր «հոգեորսությունը և յուրաքանչյուր այլ գործունեություն, որն ուղղված կլիներ գերիշխող կրոնի դեմ»: 1864թ., 1911թ. և 1952թ. սահմանադրությունները վերարտադրել են նույն դրույթը: 1975թ. Սահմանադրությունն ընդհանրապես արգելում է հոգեորսությունը (հոդված 13, կետ 2-րդ in fine՝ տե՛ս վերը՝ կետ 13). արգելքը վերաբերում է բոլոր «հայտնի կրոններին»՝ նկատի ունենալով այն կրոնները, որոնց ուսմունքը ապոկրիֆալ չէ, և որոնցում չի պահանջվում հոգեորսների գաղտնի ընդունում:

2. Օրենքներ թիվ 1363/1938 և 1672/1939

16. Մետաքսասի բռնապետության օրոք (1936-40) առաջին անգամ հոգեորսությունը, թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի համաձայն դարձավ քրեական հանցանք: Հաջորդ տարի այդ բաժինը փոփոխվել է թիվ 1672/1939 օրենքի 2-րդ բաժնով, որում հստակեցվել է «հոգեորսություն» տերմինի իմաստը.

«1. Հոգեորսության մեջ ներգրավված յուրաքանչյուր ոք պետք է դատապարտվի ազատազրկման և 1.000-ից 50.000 դրախտ տուգանքի վճարման. բացի դրանից, նա պետք է գտնվի ոստիկանության վերահսկողության տակ վեց ամսից մինչև մեկ տարի ժամկետով, ինչը պետք է որոշի դատարանը՝ հանցագործին դատապարտելիս:

Ազատազրկման ժամկետը չի կարող փոխարինվել տուգանքով:

2. «Հոգեորսությունը» նշանակում է, մասնավորապես, ցանկացած ուղղակի կամ անուղղակի ոտնձգության փորձ այլ կրոնական համոզմունքներ ունեցող անձի կրոնական հավատքի նկատմամբ՝ նպատակ ունենալով խարխլելու այդ հավատքը՝ երաշխիքներ կամ երաշխիքների խոստումներ տալու, կամ բարոյական աջակցության կամ նյութական օժանդակության միջոցով, կամ խարդախության միջոցով կամ օգտվելով այդ անձի անփորձությունից, վստահությունից, կարիքավորությունից, ցածր մտավոր կարողություններից կամ միամտությունից:

3. Նմանատիպ հանցանք գործելը դպրոցում կամ որևէ այլ կրթական օջախում, կամ մարդասիրական հաստատությունում դիտվում է որպես ծանրացուցիչ հանգամանք»:

Բ. Նախադեպային իրավունք

17. Թիվ 2276/1953 դատավճռում, որը կայացվել է Գերագույն վարչական լիակազմ դատարանի կողմից (Symvoulío tis Epikratias), հոգեորսությունը սահմանվել է հետևյալ կերպ.

«Սահմանադրության 1-ին հոդվածը, որը սահմանում է ցանկացած հայտնի կրոնի դավանելու և պաշտամունքային ծեսերն անարգել անցկացնելու ազատություն, և որով արգելվում են հոգեորությունը, ինչպես նաև գերիշխող կրոնի՝ այն է քրիստոնեական արևելյան ուղղափառ եկեղեցու դեմ ուղղված գործունեությունը, սահմանում է, որ միայն հոգևոր ուսուցումը չի կարող նույնացվել հոգեորության հետ, նույնիսկ եթե այն մատնանշում է այլ կրոնների մեջ առկա սխալները և շեղում է իր հնարավոր հետևորդներին, որոնք իրենց ազատ կամքով լքում են այն կրոնները, որոնց սկզբնապես դավանում էին: Սա պայմանավորված է նրանով, որ միայն հոգևոր ուսուցումն ազատորեն և անարգել իրականացվող պաշտամունքային ծեսի բնույթ ունի: Նմանատիպ հոգևոր ուսուցման շրջանակներից դուրս, որը կարող է ազատորեն իրականացվել, անօրինական կամ բարոյապես դատապարտելի միջոցներով գերիշխող կրոնից հնարավոր հետևորդներին շեղելու ցանկացած հետևողական փորձը հավասարազոր է հոգեորության, ինչն արգելված է Սահմանադրության վերոնշյալ դրույթով»:

18. Հունաստանի դատարանները հոգեորության մեջ մեղավոր են ճանաչել այն անձանց, ովքեր սրբերին նմանեցրել են «պատերը զարդարող պատկերների», Սրբ. Գերասիմոսին՝ «բամբակով լցված մարմնի» և եկեղեցին՝ «թատրոնի, շուկայի, կինոթատրոնի» հետ, ցնցոտիներ հագած թշվառների ամբոխ պատկերող նկար ցուցադրելիս՝ քարոզել են, որ «այսպիսին են բոլոր նրանք, ովքեր չեն հարում իմ հավատքին» (Վճռաբեկ դատարան, դատավճիռ թիվ 271/1932, Themis XVII, էջ 19), ուղղափառ հավատքի փախստականներին խոստացել են առավել շահավետ պայմաններով բնակեցում, եթե նրանք միանան Սուրբ Սուրբ Սուրբ (Էգեյան վերաբնիչ դատարան, դատավճիռ թիվ 2950/1930, Themis , էջ 103), առաջարկել են թոշակներ արտասահմանում սովորելու համար (Վճռաբեկ դատարան, դատավճիռ թիվ 2276/1953), ուղղափառ քահանաներին ուղարկել են գրքույկներ՝ առաջարկելով նրանց սովորել դրանք և կիրառել դրանց բովանդակությունը (Վճռաբեկ դատարան, դատավճիռ թիվ 59/1956, Nomiko Vima, 1956, թիվ 4, էջ 736), բաժանել են «այսպես կոչված՝ կրոնական» գրքեր և գրքույկներ «տգետ գյուղացիներին» և «փոքրահասակ դպրոցականներին» (Վճռաբեկ դատարան, դատավճիռ թիվ 201/1961, Քրեական տարեգրություններ XI, էջ 472), կամ մի երիտասարդ դերձակուհու խոստացել են նրա վիճակի բարելավում, եթե նա հեռանա ուղղափառ եկեղեցուց, որի քահանաները ենթադրաբար հանդիսանում էին «հասարակության շահագործողներ» (Վճռաբեկ դատարան, դատավճիռ թիվ 498/1961, Քրեական տարեգրություններ XII, էջ 212):

Վճռաբեկ դատարանը վճռել է, որ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնում տեղ գտած հոգեորության սահմանումը չի հակասում այն սկզբունքին, որ միայն օրենքը կարող է սահմանել այս կամ այն հանցանքը և դրա համար պատժամիջոցը: Պիրեոսի քրեական դատարանը, հետևելով այդ սկզբունքին, թիվ 36/1962 դատական որոշումում (Հունաստանի փաստաբանների ամսագիր, 1962, էջ 421), ավելացրել է, որ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնում տեղ գտած «մասնավորապես» արտահայտությունը վերաբերում է այն միջոցներին, որոնք օգտագործվել են անձի կողմից հանցանքը գործելիս և ոչ թե actus reus-ի՝ հանցանքի նկարագրությանը:

19. Մինչև 1975թ. Վճռաբեկ դատարանը վճռել է, որ 4-րդ բաժնով նախատեսված ցուցակը սպառիչ չէ: Թիվ 997/1975 վճռում (Քրեական տարեգրքեր XXVI, էջ 380) դատարանը ավելացրել է հետևյալ պարզաբանումը.

«... 4-րդ բաժնի դրույթներից հետևում է, ... որ հոգեորությունը կրոնական հավատքի նկատմամբ ոտնձգություն կատարելու այն ուղղակի կամ անուղղակի փորձն է, որի համար օգտագործվում են օրենքում առանձին թվարկված միջոցները»:

20. Վերջին շրջանում դատարանները դատապարտել են Եհովայի վկաներին՝ իրենց աղանդի ուսմունքը «հետևողականորեն» տարածելու և ուղղափառ եկեղեցուն «աշխարհի համար տանջանքի աղբյուր» ներկայացնելու համար մեղադրանքներով

(Սալոնիկի վերաքննիչ դատարան, դատավճիռ թիվ 2567/1988), որպես Նոր Կտակարանը տարածող քրիստոնյաներ՝ այլոց տներ մուտք գործելու համար (Ֆլորինայի առաջին աստյանի դատարան, դատավճիռ թիվ 128/1989), ինչպես նաև իր մեքենայի ղեկին գտնվող ուղղափառ քահանային կանգնեցնելով՝ գրքեր և գրքույկներ հանձնելու փորձի համար (Լասիտիի առաջին աստյանի դատարան, դատավճիռ թիվ 357/1990):

Մյուս կողմից, թիվ 1304/1982 դատավճռում (Քրեական տարեգրություն XXXII, էջ 502) Վճռաբեկ դատարանը բեկանել է Աթենքի վերաքննիչ դատարանի դատավճիռը (թիվ 5434/1981)՝ օրենքով հիմնավորված չլինելու պատճառով, քանի որ Վերաքննիչ դատարանը Եհովայի վկային դատապարտելիս՝ ընդամենը կրկնել է մեղադրական ակտի ձևակերպումները, և այդպիսով, չի բացատրել, թե ինչպես են «Եհովայի վկաներ աղանդի ուսմունքի հետևողական և համառ ուսուցումը» և «աղանդի գրքերի և գրքույկների նվազագույն գնով տարածումը» համարվում ոստնձգություն գանգատվողների հավատքի նկատմամբ, ինչպես նաև ցույց չէր տվել, թե ինչպես է մեղադրյալն օգտվել նրանց «անփորձությունից» և «ցածր մտավոր կարողություններից»: Վճռաբեկ դատարանը գործն ուղղարկել է Վերաքննիչ դատարան այլ կազմով նոր քննության, որն էլ արդարացրել է մեղադրյալին:

Նմանապես, մի քանի դատական որոշումներում ընդունվել է, որ հոգեորսության հանցանք չի կատարվել այն դեպքում, երբ պարզապես տեղի է ունեցել Եհովայի վկաների համոզմունքների վերաբերյալ քննարկում, երբ գրքերը և գրքույկները փոխանցվել են մուտքի մոտ (Պատրասի վերաքննիչ դատարան, դատավճիռ թիվ 137/1988), կամ փողոցում (Լարիսայի վերաքննիչ դատարան, դատավճիռ թիվ 749/1986), կամ էլ այն դեպքում, երբ մի ուղղափառ քրիստոնյայի առանց որևէ խաբեության բացատրվել են աղանդի նպատակները (Թրիկալայի քրեական դատարան, դատավճիռ թիվ 186/1986): Վերջապես, վճռվել է, որ «անգրագետ գյուղացի» լինելը բավարար պայման չէ, որպեսզի անձը, որին դիմել է ենթադրյալ աղանդավորը համարվի «միամիտ», ինչպես նշված է 4-րդ բաժնում (Վճռաբեկ դատարան, վճիռ թիվ 1155/1978):

21. 1975թ. Սահմանադրության վերանայումից հետո, Եհովայի վկաները դատական գործեր են հարուցել՝ վիճարկելու համար թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի սահմանադրականությունը: Նրանք գանգատվել են, որ հանցանքի սահմանումը հստակ չէ, սակայն, առաջին հերթին նրանք առարկել են օրենքի փաստացի վերնագրի դեմ, որից հետևում է, որ այն ուղղված էր այն ժամանակ ուժի մեջ գտնվող Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածները պահպանելուն (1911թ. Սահմանադրությունը. տե՛ս վերը՝ կետ 12), որոնք արգելում էին գերիշխող կրոնի դեմ ուղղված հոգեորսությունը: Ներկա Սահմանադրության մեջ այս արգելքի շրջանակներն ընդլայնվել են և ընդգրկում են բոլոր կրոնները: Բացի դրանից այն այլևս չի մտնում կրոնին վերաբերող գլխի մեջ, փոխարենը տեղ է գտել քաղաքացիական և սոցիալական իրավունքներին վերաբերող գլխում, մասնավորապես 13-րդ հոդվածում, որը երաշխավորում է խղճի ազատությունը:

Դատարանները միշտ մերժել են հակասահմանադրական լինելու վերաբերյալ նմանատիպ առարկությունները, չնայած նրան, որ իրավաբանական գրականության մեջ դրանք գտել են մեծ աջակցություն:

III. Եհովայի վկաները Հունաստանում

22. Եհովայի վկաների շարժումը Հունաստանում երևան է եկել 20-րդ դարի սկզբին: Այդ շարժման անդամների թիվը տատանվում է 25.000-ից 70.000-ի միջև: Անդամները պատկանում են 338 համայնքների, որոնցից առաջինը հիմնադրվել է Աթենքում 1922թ.:

23. 1975թ. Սահմանադրության վերանայումից ի վեր Գերագույն վարչական դատարանը մի շարք գործերի կապակցությամբ վճռել է, որ Եհովայի վկաները մտնում են «հայտնի կրոն» սահմանման մեջ (դատավճիռներ թիվ 2105 և 2106/1975, 4635/1977, 2484/1980, 4620/1985, 790 և 3533/ 1986 և 3601/1990): Սակայն որոշ առաջին ատյանի դատարաններ շարունակում են ընդունել հակառակը (Յերակլիոնի առաջին ատյանի դատարան, դատավճիռներ թիվ 272/ 1984 և 87/1986): 1986թ. Գերագույն վարչական դատարանը վճռել է (դատավճիռ թիվ 3533/1986), որ նախարարական որոշմամբ Եհովայի վկային որպես գրականության ուսուցիչ նշանակելու մերժումը հակասում է կրոնական հարցերում խղճի ազատությանը և, հետևաբար, Յունաստանի Սահմանադրությանը:

24. Դիմողի կողմից տրամադրված վիճակագրական տեղեկությունների համաձայն 1975թ.-ից (ժողովրդավարության վերահաստատում) մինչև 1992թ. ձերբակալվել են 4400 Եհովայի վկաներ, որոնցից 1233-ը կանգնել է դատարանի առջև, իսկ 208-ը դատապարտվել է: Դրանից առաջ մի քանի Եհովայի վկաներ դատապարտվել էին կոմունիզմը և դրա հետևանքները կանխարգելող թիվ 117/1936 և հասարակական կարգը պահպանող թիվ 1075/1938 օրենքների հիման վրա:

Կառավարությունը չի վիճարկել դիմողի ներկայացրած թիվը: Սակայն նրանք նշել են, որ Եհովայի վկաների դատապարտման հաճախականության մեջ նկատվում է ակնհայտ անկում. 260 ձերբակալվածների ընդհանուր թվից 1992 և 1993թթ. դատապարտվել է միայն 7-ը:

ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

25. Պրն Կոկինակիսը դիմել է Հանձնաժողով 1988թ. օգոստոսի 22-ին: Նա պնդել է, որ հոգեորսության մեղադրանքով իր դատապարտումը հանդիսանում է Կոնվենցիայի 7-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում: Նա նաև հիմնվում է 5-րդ հոդվածի 1-ին կետի և 6-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ կետերի վրա:

26. 1990թ. դեկտեմբերի 7-ին Հանձնաժողովն ընդունելի է հայտարարել զանգատը (թիվ 14307/88), բացի այն զանգատներից, որոնք հիմնված էին 5-րդ և 6-րդ հոդվածների վրա՝ հայտարարելով, որ դրանք ակնհայտորեն անհիմն են: 1991թ. դեկտեմբերի 3-ի իր զեկույցում (արված համաձայն 31-րդ հոդվածի) Հանձնաժողովն արտահայտել է այն կարծիքը, որ՝

(ա) չի խախտվել 7-րդ հոդվածը (տասնմեկ ձայնով՝ ընդդեմ երկուսի),

(բ) խախտվել է 9-րդ հոդվածը (միաձայն), և

(գ) 10-րդ հոդվածի հիման վրա առանձին հարց չի ծագում (տասներկու ձայնով՝ ընդդեմ մեկի):

Իրավունքի հարցեր

27. Պրն Կոկինակիսը զանգատվել է՝ հոգեորսության մեղադրանքով իր դատապարտման դեմ. նա համարում է, որ դա հակասում է Կոնվենցիայի 7-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներին, ինչպես նաև 14-րդ հոդվածին՝ 9-րդ հոդվածի հետ համակցության մեջ:

I. 9-րդ հոդվածի վիճարկվող խախտումը

28. Դիմողի զանգատները հիմնականում վերաբերում էին կրոնը դավանելու իր ազատության սահմանափակմանը: Հետևաբար, Դատարանը կսկսի 9-րդ հոդվածի հետ առնչություն ունեցող հարցերի քննությունից: 9-րդ հոդվածով սահմանված է.

«1.

Յուրաքանչյուր

որ ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների»:

29. Դիմողը չի սահմանափակվում միայն այն պնդմամբ, որ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժինն իր նկատմամբ սխալ է կիրառվել: Նրա գանգատը վերաբերում է ավելի լայնածավալ խնդրի, այն է՝ թե արդյոք այդ օրենքը համատեղելի է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքի հետ, որը, պնդում է նա, 1953թ. ի վեր հանդիսանալով Գուևաստանի իրավունքի մաս, ըստ Սահմանադրության գերիշխում է ցանկացած՝ իրեն հակասող օրենքի նկատմամբ: Նա նշել է, թե և՛ տրամաբանական, և՛ իրավական առումով որքան դժվար է զոնե փոքր-ինչ հստակ սահմանագիծ անցկացնել հոգեորսության և կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատության միջև, ինչպես նաև միանձնյա կամ այլոց հետ համատեղ, հրապարակավ կամ մասնավոր կարգով դրան դավանելու ազատության միջև, ինչը ներառում է ուսուցման, հրապարակման և անձանց միջև տեղի ունեցող քննարկումների բոլոր ձևերը: Ըստ պրն Կոկինակիսի՝ հոգեորսության արգելումը, որը Մետաքսասի բռնապետության տարիներին հանդիսանում էր քրեական հանցանք, ոչ միայն սահմանադրական չէր, այլ նաև թիվ 1363/1938 օրենքի մյուս դրույթների հետ մեկ կազմել է բոլոր հավատքների և ուսմունքների հետևորդներին սպառնացող «արգելքների և պատժի սպառնալիքների մի ամբողջ զինանոց»:

Վերջապես, պրն Կոկինակիսը գանգատվել է վարչական և դատական իշխանությունների կողմից տվյալ օրենքի ընտրովի կիրառման դեմ. «ակադեմիական ամենախիզախ վարկածներից» վեր է պատկերացնելը, կաթուղի քահանայի կամ բողոքական հոգևորականի կողմից ուղղափառ քրիստոնյայի դեմ գանգատ ներկայացնելու հնարավորությունն առ այն, որ վերջինս փորձել է գրավել և դեպի իր կրոնը շեղել նրանց համայնքներից մեկը: Նույնիսկ նվազ հավանական է, որ ուղղափառ քրիստոնյան կենթարկվեր դատական հետապնդման «գերիշխող կրոնի» անունից հոգեորսության համար:

30. Ըստ Կառավարության՝ Գուևաստանում կա ցանկացած կրոնի դավանելու ազատություն. կրոնների հետևորդներն ունեն իրավունք ինչպես իրենց հավատքն ազատորեն արտահայտելու, այնպես էլ այլ անձանց հավատքի վրա ներգործելու փորձ կատարելու այն դեպքում, երբ բոլոր եկեղեցիների և բոլոր քրիստոնյաների պարտքը քրիստոնեական վկայությունն է: Սակայն, գոյություն ունի արմատական տարբերություն վկայության և «հոգեորսության, որը հարգված չէ» միջև, որը կիրառում է խաբեությունը և այլ անարժան ու անբարոյական միջոցներ, ինչպիսիք են անձի կարիքավորության, ցածր մտավոր կարողությունների և անփորձության շահագործումը: 4-րդ բաժինն արգելում է նմանատիպ հոգեորսությունը. «սխալ ընկալված» աղանդավորությունը, որին Եվրոպական դատարանն անդրադարձել է Կջելդսենը, Բասկ Մենդսենը և Պեդերսենն ընդդեմ Դանիայի 1976թ. դեկտեմբերի 7-ի իր վճռում (Շարքեր A, թիվ 23, էջ 28, կետ 54), և ոչ թե պարզ և մաքուր կրոնական ուսմունքը: Ավելին, հունական դատարաններն ընդունել էին հոգեորսության հենց այս ձևակերպմամբ սահմանումը:

Ա. Ընդհանուր սկզբունքներ

31. Ինչպես ամրագրված է 9-րդ հոդվածում, մտքի, խղճի և կրոնի ազատությունը՝ Կոնվենցիայի իմաստով, հանդիսանում է «ժողովրդավարական հասարակության» հիմքերից մեկը: Այն, իր կրոնական կտրվածքով, հանդիսանում է այն կենսական տարրերից մեկը, որը ձևավորում է հավատացյալների ինքնությունը և նրանց պատկերացումները կյանքի վերաբերյալ, սակայն, մյուս կողմից, այն նաև արժեք է աթեիստների, ազնուստիկների, սկեպտիկների և չեզոք անձանց համար: Բազմակարծությունը, որը դարավոր պայքարի թանկարժեք արդյունքը հանդիսացող ժողովրդավարական հասարակության անբաժան մասն է, կախված է դրանից:

Կրոնի ազատությունը հիմնականում հանդիսանալով անձի խղճի հարց՝ նաև ենթադրում է, *inter alia*, «կրոնը դավանելու [անձի]» ազատությունը: Խոսքով և գործով վկայություն տալը սահմանափակված է կրոնական հանդուժմունքների գոյությամբ:

Համաձայն 9-րդ հոդվածի՝ կրոնը բացահայտորեն դավանելու ազատությունը կարող է իրականացվել ոչ միայն համայնքի մյուս անդամների հետ, «հրապարակավ», և այն խմբի շրջանակներում, որը դավանում է նույն կրոնը, այլ նաև «մենակ» ու «առանձին»: Ավելին, այդ ազատությունն սկզբունքորեն ենթադրում է նաև հարևանին համոզելու փորձ կատարելու իրավունքը, օրինակ՝ «ուսուցման» միջոցով, որի բացակայության դեպքում «կրոնը կամ հավատքը փոխելու [անձի] ազատությունը», ամենայն հավանականությամբ, կդառնա լուրջ չգործող իրավունք:

32. 9-րդ հոդվածով սահմանված պահանջները Հունաստանի Սահմանադրության մեջ արտացոլված են այնքանով, որքանով վերջինիս 13-րդ հոդվածը նախատեսում է կրոնական հարցերում խղճի ազատությունը և ցանկացած հայտնի կրոն դավանելու ազատությունը (տե՛ս վերը՝ կետ 13): Հետևաբար, Եհովայի վկաներն ունեն ինչպես «հայտնի կրոնի» կարգավիճակ, այնպես էլ դրանից բխող արտոնություններ՝ ծիսակատարությունների առնչությամբ (տե՛ս վերը՝ կետեր 22-23):

33. 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքների հիմնարար բնույթն արտացոլված է նաև դրանց սահմանափակումներին վերաբերող կետի ձևակերպման մեջ: Ի տարբերություն 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների 2-րդ կետերի, որոնք անդրադառնում են այն բոլոր իրավունքներին, որ նշվում են այդ հոդվածների 1-ին կետերում, 9-րդ հոդվածի 2-րդ կետը վերաբերում է միայն «կրոն կամ հավատք դավանելու անձի ազատությանը»: Դրանով ճանաչում է այն, որ ժողովրդավարական հասարակություններում, որտեղ միևնույն բնակչության տարբեր խմբեր դավանում են տարբեր կրոններ, կարող է անհրաժեշտություն առաջանալ սահմանափակելու այս ազատությունը՝ տարբեր խմբերի շահերը հաշտեցնելու և բոլոր կրոնների ու հավատքների նկատմամբ հարգանք ապահովելու նպատակով:

34. Ըստ Հունաստանի կառավարության՝ Հունաստանի իրավական համակարգում կարելի է գտնել հենց այդպիսի սահմանափակումներ: 1975թ. Սահմանադրությունն արգելել է հոգեորսությունը՝ անխտիր բոլոր կրոնների առնչությամբ. իսկ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժինը, որով այս արգելքի խախտումը հանգեցնում է քրեական պատասխանատվության, պահպանվել է հետագա մի քանի ժողովրդավար կառավարությունների կողմից՝ անկախ դրա պատմական և քաղաքական ծագումից: 4-րդ բաժնի միակ նպատակն անձանց հավատքները՝ նրանց արժանապատվությունը և անհատականությունը խարխուղ գործողություններից պաշտպանելն է:

35. Դատարանը հնարավորինս կսահմանափակվի այն հարցի քննությամբ, որ բարձրացվել է տվյալ առանձնահատուկ գործով: Սակայն Դատարանը չի կարող անտեսել վերոնշյալ դրույթները, քանի որ վիճարկվող գործողությունը պայմանավորված է հենց այդ դրույթների կիրառմամբ (տե՛ս, *mutatis mutandis*, Ջեոֆրե դե լա Պլադելն ընդդեմ Ֆրանսիայի 1992թ. դեկտեմբերի 16-ի վճիռը, Շարքեր A, թիվ 253-B, էջ 42, կետ 31):

F. Սկզբունքների կիրառումը

36. Լասիտիի քրեական դատարանի սահմանած պատիժը, որն այնուհետև կրճատվել է Կրետեի վերաքննիչ դատարանի կողմից (տե՛ս վերը՝ կետեր 9-10), հանդիսանում է միջամտություն պրն Կոկինակիսի «[իր] կրոնին կամ հավատքին դավանելու ազատության» իրավունքի իրացմանը: Նման միջամտությունը հակասում է 9-րդ հոդվածին, եթե այն «նախատեսված չէ օրենքով», չի հետապնդում 2-րդ կետում սահմանված մեկ կամ ավելի իրավաչափ նպատակներ և «անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակներին հասնելու համար:

1. «Օրենքով նախատեսված»

37. Դիմողը պնդել է, որ 7-րդ հոդվածի կապակցությամբ իր ներկայացրած բացատրությունները կիրառելի են նաև «օրենքով նախատեսված» արտահայտության նկատմամբ: Այդ իսկ պատճառով Դատարանը քննության կառնի այդ բացատրությունները հենց այս տեսանկյունից:

38. Պրն Կոկինակիսը, առաջին հերթին, վիճարկել է թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի ձևակերպումը: Նա քննադատել է հոգեորսության՝ «օբյեկտիվ կողմի» նկարագրության բացակայությունը: Ըստ դիմողի՝ դա դիտավորություն է և միտում ունի հնարավորություն ընձեռելու, որ կրոնի վերաբերյալ ցանկացած բնույթի քննարկում կամ հաղորդակցություն ընդգրկվի այս դրույթի շրջանակներում: Նա նշել է այն վտանգի առկայությունը, որ ինչպես ոստիկանությունը, այնպես էլ շատ հաճախ դատարանները «ընդարձակում են» այս բաժնի աղոտ ձևակերպման իմաստը, ինչպես, օրինակ, «մասնավորապես» և «անուղղակի փորձ» արտահայտություններին՝ հավասարեցնելով դրանք միջամտության այլ անձանց հավատքին: Ոչ ուղղափառ քրիստոնյային պատժելը նույնիսկ այն դեպքում, երբ վերջինս առաջարկում է «բարոյական և նյութական օգնություն», հավասարազոր է այնպիսի գործողությունը պատժելուն, որպիսին կարող է վերագրվել ցանկացած կրոնի, և որը որոշակի արտակարգ իրավիճակներում պահանջվում է Քրեական օրենսգրքով: Թիվ 1672/1939 օրենքը (տե՛ս վերը՝ կետ 16) 4-րդ բաժնին ընդամենն ազատել է սկզբնական ձևակերպման մեջ առկա «կրկնվող բառերից»: այն պահպանել է բոլոր «ընդարձակ, ամեն ինչ ներառող» արտահայտությունները, ուղղակի օգտագործելով ավելի կոնկրետ, սակայն նույնքան «պեղանտիկ» ոճ, որը կոչված է ապահովելու ոչ ուղղափառ քրիստոնյաների մշտական ճնշումը: Հետևաբար, ոչ մի քաղաքացի իր վարքագիծն այս օրենքի հիման վրա կարգավորել չի կարող:

Բացի վերոնշյալից, թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնին անհամատեղելի է Սահմանադրության 13-րդ հոդվածի հետ:

39. Մյուս կողմից, Կառավարությունը պնդել է, որ 4-րդ բաժնում տեղ գտած հոգեորսության սահմանումը ճշգրիտ է և որոշակի. դրանում թվարկվում են հանցանքի բոլոր բաղկացուցիչները: «Մասնավորապես» մակբայի կիրառումը կարևոր չէ, քանի որ այն վերաբերում է ընդամենը հանցանքը կատարելու միջոցներին: Բացի դրանից, նմանատիպ հատկանիշների ցանկի օգտագործումը չափազանց ընդունված է քրեական օրենսդրություններում:

Վերջապես, ինչ վերաբերում է հանցանքի «օբյեկտիվ կողմի» նկարագրությանը, ապա այն թերի չէ և սահմանված է որպես փորձ՝ փոխելու այլ անձանց հավատքի հիմք հանդիսացող համոզմունքները:

40. Դատարանն արդեն նշել է, որ գոյություն ունեն բազմաթիվ օրենքներ, որոնց ձևակերպումները բացարձակ ճշգրիտ չեն: Չափազանց կոնկրետ լինելուց խուսափելու, ինչպես նաև փոփոխվող հանգամանքների հետ համընթացությունն ապահովելու անհրաժեշտությունը բերում է նրան, որ բազմաթիվ օրենքներ շատ թե քիչ ձևակերպված են աղոտ կերպով (տե՛ս, օրինակ՝ *mutatis mutandis*, Մյուլերը և

այլոք ընդդեմ Շվեյցարիայի 1988թ. մայիսի 24-ի դատավճիռը, Շարքեր A, թիվ 133, էջ 20, կետ 29): Աղանդավորությանը վերաբերող քրեաիրավական դրույթները պատկանում են հենց այս կարգին: Նման դրույթների մեկնաբանումը և կիրառումը պայմանավորվում է պրակտիկայով:

Այս դեպքում գոյություն ունեւ ձևավորված ներպետական նախադեպային իրավունք (տե՛ս վերը՝ կետեր 17-20): Այս նախադեպային իրավունքը, լինելով հրապարակված և մատչելի, լրացնում է 4-րդ բաժնի ձևակերպումը և այնպիսին է, որ հնարավորություն էր ընձեռում պրն Կոկինակիսին կարգավորելու իր վարքագիծը այս հարցում:

Ինչ վերաբերում է թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի հակասահմանադրական լինելուն, ապա Դատարանը կրկնում է, որ ներպետական իրավունքի մեկնաբանումը և կիրառումը, առաջին հերթին, պետական իշխանությունների, և մասնավորապես, դատարանների գործն է (տե՛ս , որպես ամենավերջին աղբյուր, Զադչինաստասիուն ընդդեմ Զունաստանի 1992թ. դեկտեմբերի 16-ի դատավճիռը, Շարքեր A, թիվ 252, էջ 18, կետ 42): Զունաստանի դատարանները, որոնք ստիպված էին քննության առնել այս հարցը, սահմանել են, որ չկա ոչ մի անհամատեղելիություն (տե՛ս վերը՝ կետ 21):

41. Զետևաբար, վիճարկվող միջոցը «նախատեսված էր օրենքով»՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի իմաստով:

2. Իրավաչափ նպատակ

42. Կառավարությունը պնդել է, որ ժողովրդավարական պետությունը պարտավոր է ապահովել իր տարածքում բնակվող բոլոր անձանց անհատական ազատություններից օգտվելը: Մասնավորապես, եթե Կառավարությունը աչալրջորեն չպաշտպաներ անձի կրոնական համոզմունքն ու արժանապատվությունն անբարոյական և անազնիվ միջոցներով ներգործելու փորձերից, ապա 9-րդ հոդվածի 2-րդ կետը գործնականում ամբողջովին կկորցնէր իր իմաստը:

43. Դիմողի կարծիքով, կրոնը «մշտապես նորացվող մարդկային մտքի» մի մասն է և հնարավոր չէ պատկերացնել դրա բացառումը հասարակական քննարկումներից: Անհատական իրավունքների արդարացի հաշվեկշիռը պարտադրում է ընդունել, որ այլ անձանց մտքերը պետք է ենթարկվեն նվազագույն ազդեցության, այլապես արդյունքում կլինեն «տարօրինակ հասարակություն՝ բաղկացած լռակյաց կենդանիներից, որոնք մտածում են ... սակայն չեն արտահայտում իրենց մտքերը, որոնք խոսում են... բայց չեն շփվում, և որոնք գոյություն ունեն, սակայն չեն գոյակցում»:

44. Զաշվի առնելով գործի հանգամանքները և համապատասխան դատարանների որոշումների փաստացի հանգամանքները, Դատարանը համարում է, որ վիճարկվող միջոցը 9-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչը վկայակոչվել է Կառավարության կողմից:

3. «Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»

45. Պրն Կոկինակիսը չի համարել, որ ժողովրդավարական հասարակությունում կա անհրաժեշտություն զրկելու քաղաքացուն խոսելու իր իրավունքից, երբ նա գալիս է իր հարևանի հետ կրոնական հարցեր քննարկելու: Նրան հետաքրքրել է այն հարցը, թե ինչպես կարող է համոզմունքով մատուցված զրույցը, որը հիմնված է բոլոր քրիստոնյաների համար ընդհանուր սուրբ գրքերի վրա, խախտել այլ անձանց իրավունքները: Տկն Կիրիակակին ուներ բավարար մտավոր կարողություններ և բավականաչափ փորձառու չափահաս կին էր. հնարավոր չէր Եհովայի վկայի զրույցը քահանայի կնոջ հետ համարել քրեական հանցանք՝ առանց վտանգելու հիմնարար

իրավունքները: Ավելին, Կրետեի վերաքննիչ դատարանը, չնայած այն հանգամանքին, որ իր տրամադրության տակ ուներ ճշգրիտ և բացարձակ պարզ փաստեր, այնուամենայնիվ, չի կարողացել սահմանել դիմողի կողմից գանգատվողի կրոնական հավատքին միջամտելու փորձի բնույթի ուղղակի կամ անուղղակի լինելը. դատարանի ներկայացրած պատճառաբանությունից ակնհայտ էր, որ դիմողը դատապարտվել է «ոչ թե իր կատարածի համար, այլ իր ով լինելու համար»:

Հանձնաժողովն ընդունել է այս փաստարկն ըստ էության:

46. Ի հակառակ դրան, Կառավարությունը պնդել է, որ Հունաստանի դատարանները որպես հիմք են ընդունել պարզ փաստերը, որոնք հանդիսանում էին հոգեորսության հանցանք. արն Կոկինակիսի համառությունը տկն Կիրիակակիի տուն մտնելու կապակցությամբ՝ դրա համար կեղծ պատճառ ներկայացնելով, այն պահելաձևը, որ նա որդեգրել էր շահելու համար տկն Կիրիակակիի վստահությունը, ինչպես նաև Սուրբ Գրքի «հմուտ» վերլուծումը, որը նախատեսված էր գանգատվողին, որը չուներ «համապատասխան գիտելիքներ ուսմունքի» վերաբերյալ (տե՛ս վերը՝ կետեր 9-10), «մոլորեցնելու» համար: Կառավարությունը նշել է, որ պետության կողմից անտարբերությունն այն հարձակումների նկատմամբ, որոնք ուղղված են կրոնական հանոգմունքների ազատությանը, կհանգեցնեն լայնածավալ խռովությունների, ինչը կարող էր խաթարել հասարակական հանգստությունը:

47. Դատարանը բազմիցս ընդունել է, որ Պայմանավորվող պետություններից պետք է թողնվի գնահատման որոշ շրջանակ՝ միջամտության անհրաժեշտության առկայությունը և ծավալը գնահատելու համար, սակայն այդ շրջանակը ենթակա է եվրոպական վերահսկողության՝ ներառելով ինչպես օրենսդրությունը, այնպես էլ կիրառվող որոշումները, նույնիսկ եթե դրանք կայացվել են անկախ դատարանի կողմից: Դատարանի խնդիրն է որոշել, թե արդյոք ներպետական մակարդակում ձեռնարկված միջոցներ սկզբունքորեն արդարացված են և համաչափ:

Այս վերջին հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար Դատարանը պետք է համեմատի այլ անձանց իրավունքները և ազատությունները պաշտպանելու պահանջները այն վարքագծի հետ, որի համար մեղադրվել է դիմողը: Գործադրելով իր վերահսկողության իրավազորությունը՝ Դատարանը պետք է դիտարկի վիճարկվող դատական որոշումները՝ հաշվի առնելով գործի՝ որպես ամբողջության նախադրյալները (տե՛ս, *inter alia* և *mutatis mutandis*, ԲարՖորդն ընդդեմ Դանիայի 1989թ. փետրվարի 22-ի վճիռը, Շարքեր A, թիվ 149, էջ 12, կետ 28):

48. Առաջին հերթին պետք է տարբերակել Քրիստոնեական վկա լինելն անպատշաճ հոգեորսությունից: Առաջինը վերաբերում է ճշմարիտ ավետարանչականությանը, որը 1956թ. եկեղեցիների համաշխարհային խորհրդի հովանու ներքո ներկայացված հաշվետվության մեջ նկարագրված է որպես հիմնական առաքելություն և ամեն քրիստոնյայի ու եկեղեցու պարտականություն: Երկրորդը վերաբերում է դրա աղավաղմանը և դեֆորմացիային: Համաձայն նույն հաշվետվության, եկեղեցու համար նոր անդամներ գրավելը կարող է իրականացվել նյութական կամ հասարակական արտոնություններ տրամադրելու խոստումների միջոցով, կամ ծանր հոգեկան ու նյութական վիճակում գտնվող անձանց վրա անպատշաճ ճնշման գործադրման միջոցով, այս դեպքում հնարավոր են նաև բռնության և հրահանգավորման կիրառումը: Ընդհանրացնելով կարելի է ասել, որ այն համատեղելի չէ մտքի, խղճի և կրոնի ազատության նկատմամբ հարգանքի հետ:

Թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հունաստանի օրենսդրության մեջ ընդունված համապատասխան չափանիշները կարելի է համաձայնեցնել վերոհիշյալի հետ՝ այնքանով, որքանով դրանք նախատեսված են պատժելու միայն անպատշաճ հոգեորսությունը, ինչը Դատարանը չպետք է վերացականորեն սահմանի տվյալ գործում:

49. Սակայն Դատարանը նշում է, որ Հունաստանի դատարանները դիմողի պատասխանատվությունը սահմանելիս՝ ընդամենը վերարտադրել են 4-րդ բաժնի

ձևակերպումները և բավարար չափով չեն պարզաբանել, թե հատկապես ինչպես է մեղադրյալն անպատշաճ միջոցներով փորձել համոզել իր հարևանին:

Շարահղված փաստերից և ոչ մեկը չի արդարացնում այդ եզրահանգումը:

Այսպիսով, չկա վկայություն այն, որ հաշվի առնելով գործի հանգամանքները՝ դիմողի դատապարտումն արդարացված է ճնշող հասարակական անհրաժեշտությամբ: Այդ իսկ պատճառով, վիճարկվող միջոցը չի կարող համարվել համաչափ հետապնդվող իրավաչափ նպատակին կամ, հետևաբար, «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում... անձանց իրավունքները և ազատությունները պաշտպանելու համար»:

50. Որպես եզրահանգում՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում:

II. 7-րդ հոդվածի վիճարկվող խախտումը

51. Պրն Կոկինակիսը նաև վկայակոչել է 7-րդ հոդվածը, որով նախատեսվում է, որ՝

«1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն»:

Ըստ դիմողի՝ այս հոդվածի հետ քրեական դրույթի համատեղելիությունն ապահովելու համար վերջինիս ձևակերպումը պետք է լինի բավարար չափով ճշգրիտ և պարզ (տե՛ս վերը՝ կետեր 37-38): Նա նշել է, որ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի դեպքում սա ապահովված չէ:

52. Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսված չէ լոկ՝ քրեական իրավունքի հետադարձ կիրառումն ի վնաս մեղադրյալի արգելելու համար: Այն նաև ընդհանուր առմամբ մարմնավորում է այն սկզբունքը, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (*nullem crimen, nulla poena sine lege*), ինչպես նաև այն սկզբունքը, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի լայն մեկնաբանության տեղիք տա, օրինակ համանմանությամբ. սրանից հետևում է, որ հանցանքը պետք է պարզորեն սահմանված լինի օրենքով: Այս պայմանը բավարարված է այն դեպքում, երբ անձը համապատասխան դրույթի ձևակերպումից, անհրաժեշտության դեպքում դատարանների մեկնաբանության օգնությամբ, կարող է հասկանալ, թե հատկապես որ գործողությունների ու անգործության համար է նա ենթակա պատասխանատվության:

Տվյալ գործում իրավիճակն իսկապես այսպիսին էր. այս կապակցությամբ Դատարանը հղում է կատարում տվյալ վճռի 40-41 կետերին:

53. Եզրակացվում է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի խախտվել:

III. 10-րդ հոդվածի վիճարկվող խախտումը

54. Այնուհետև դիմողը վկայակոչել է արտահայտվելու իր ազատությունը, ինչը երաշխավորվում է 10-րդ հոդվածով: Իր դատապարտումը հարված էր ոչ միայն իր կրոնական հայացքների տարածմանը, այլ նաև ընդհանուր առմամբ իր

հասարակական -փիլիսոփայական հայացքներին, քանի որ Կրետեի վերաքննիչ դատարանը նշել էր, որ նա խոսել է տևյալ Կիրիակակիի հետ Օլոֆ Պալմ քաղաքական գործչի մասին և տարածել է խաղաղասիրական տեսակետներ:

55. Հաշվի առնելով 9-րդ հոդվածի կապակցությամբ իր որոշումը (տե՛ս վերը՝ կետ 50), Դատարանը, ինչպես Հանձնաժողովը, չի տեսնում զանգատն այս մասով քննության առնելու անհրաժեշտություն:

IV. 9-րդ հոդվածի հետ համատեղ 14-րդ հոդվածի վիճարկվող խախտումը (հոդվ.14+9)

56. 1992թ. օգոստոսի 5-ին իր գրավոր բացատրություններում դիմողը նաև պնդել է, որ հանդիսանում է 14-րդ հոդվածին հակառակ խտրականության զրոհ՝ 9-րդ հոդվածի հետ մեկտեղ: Նա հայտարարել է, որ այդ խտրականությունը բխում էր 1363/1938 օրենքի 4-րդ բաժնում առկա թերացումներից կամ այդ բաժնի կիրառումից:

57. Չնայած նրան, որ այս զանգատը չի բարձրացվել Հանձնաժողովում, այն վերաբերում է նույն փաստերին, որոնց վերաբերում էին 7-րդ և 9-րդ հոդվածների հիման վրա ներկայացված զանգատները: Սակայն, հաշվի առնելով վերը՝ 50-րդ կետում տեղ գտած եզրակացությունը, Դատարանը գտնում է, որ չկա այն քննության առնելու անհրաժեշտություն:

V. 50-րդ հոդվածի կիրառումը

58. Համաձայն Կոնվենցիայի 50-րդ հոդվածի,

«Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական կամ ցանկացած այլ իշխանությունների կայացրած որոշումը կամ ձեռնարկած միջոցը մասամբ կամ ամբողջությամբ հակասում են ... Կոնվենցիայից բխող պարտավորություններին և, եթե նշված Կողմի ներպետական իրավունքը հնարավորություն է տալիս միայն մասնակի փոխհատուցում կատարելու այդ որոշման կամ միջոցի կիրառման հետևանքների դիմաց, Դատարանի որոշմամբ, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին տրամադրվում է արդարացի բավարարում»:

59. Լսումների ժամանակ դիմողն առաջին հերթին պահանջել է 500.000 դրահմ (GRD/ ՀՀԴ) փոխհատուցում ոչ նյութական վնասի դիմաց:

Դատարանը համարում է, որ նա ապացուցել է այդ վնասը, և որ չնայած Կառավարության հակառակ կարծիքին, խախտման փաստի ճանաչումը բավարար չէ դիմողին այդ վնասի դիմաց հատուցելու համար: 50-րդ հոդվածի պահանջների հիման վրա Դատարանը կատարել է անաչառ գնահատում և այս կապակցությամբ սահմանում է 400.000 GRD չափով փոխհատուցում:

60. Հունաստանի դատարաններում և Կոնվենցիայի հաստատություններում կրած ծախսերի և ծախքերի դիմաց, պրն Կոկինակիսն ակնկալել է 2.789.500 GRD գումար՝ ներկայացնելով դրա մանրամասները:

Կառավարությունը համարել է, որ այս գումարը չափից ավելի է: Մասնավորապես Կառավարությունը վիճարկել է՝ (ա) Հունաստանի դատարաններում և Եվրոպական դատարանում դիմողին երկու փաստաբանների ներկայացնելու, ինչպես նաև Կրետեի դատարաններում դիմողին Աթենքի փաստաբանի ներկայացնելու անհրաժեշտությունը, և (բ) Վճռաբեկ դատարանում լսումներին պրն Կոկինակիսի ներկա գտնվելու անհրաժեշտությունը:

Ինչպես Հանձնաժողովի պատվիրակը, Դատարանը նույնպես, այնուամենայնիվ, գտնում է, որ պահանջը ողջամիտ է և, հետևաբար, այն բավարարում է ամբողջությամբ:

ԱՅՍ ՀԻՍՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Վճռում է, վեց ձայնով՝ ընդդեմ երեքի, որ տեղի է ունեցել 9-րդ հողվածի խախտում,
2. Վճռում է, ութ ձայնով՝ ընդդեմ մեկի, որ 7-րդ հողվածի խախտում տեղի չի ունեցել,
3. Վճռում է, միաձայն, որ չկա գործը 10-րդ և 9-րդ հողվածի հետ մեկտեղ 14-րդ հողվածի հիման վրա քննության առնելու անհրաժեշտություն,
4. Վճռում է, միաձայն, որ պատասխանող պետությունը պետք է եռամսյա ժամկետում դիմողին վճարի 400.000 (չորս հարյուր հազար) դրահիմ` ոչ նյութական վնասի դիմաց, և 2.789.500 (երկու միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր) դրահիմ` ծախսերի և ծախքերի դիմաց:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, և հրապարակվել է դռնբաց նիստում, Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1993թ. մայիսի 25-ին:

Ռոլվ Ռիսդալ
Նախագահ
Մարկ-Անդրե Էյսեն
Քարտուղար

Ըստ Կոնվենցիայի 51-րդ հողվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 53-րդ կանոնի 2-րդ կետի սույն վճռին կցվում են հետևյալ առանձին կարծիքները.

- (ա) պրն Փետիտիի մասնակի համընկնող կարծիքը,
- (բ) պրն Դե Մեյերի համընկնող կարծիքը,
- (գ) պրն Վալտիկոսի չհամընկնող կարծիքը,
- (դ) պրն Մարտենսի մասնակի չհամընկնող կարծիքը,
- (ե) պրն Ֆոյգելի և պրն Լուիզոլի միացյալ չհամընկնող կարծիքը:

Ռ.Ռ.
Մ.-Ա.Է.

ԴԱՏԱՎՈՐ ՓԵՏԻՏԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՄՐՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ (Թարգմանություն)

Ես մեծամասնության հետ քվեարկել եմ 9-րդ հողվածի խախտմանը կողմ, սակայն համարում եմ, որ վճռում բերված պատճառաբանումն օգտակար կլիներ ընդարձակել:

Բացի դրանից, ես մեծամասնության հետ էի նաև այն տեսակետում, որ հոգեորսությանը վերաբերող՝ ներկայումս Հունաստանում գործող քրեական օրենսդրությունն ինքնին հակասում է 9-րդ հողվածին:

Կոկինակիսի գործն ունի բացառիկ կարևորություն: Եվրոպական դատարանի հիմնադրումից ի վեր սա կրոնի ազատության մասին առաջին իրական գործն է, որ հանձնվել է Դատարանի քննությանը: Բացի դրանից, որոշումը կայացվել է այն ժամանակ, երբ ՄԱԿ-ը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն նախապատրաստում են Հանդուրժողականության համաշխարհային տարի, որը կոչված է ապահովելու

Անհանդուրժողության բոլոր ձևերի դեմ՝ 1981թ. ՄԱԿ-ի հռչակագրի ազդեցությունը, որի շուրջ բանակցությունները տևել են 20 տարի:

Առաջին հերթին պետք է նշել, որ, իմ կարծիքով, 9-րդ հոդվածին հակասում է հենց բուն օրենքը: Ես համաձայն եմ ընդունելու դրա կանխատեսելիությունը: Սակայն սահմանումը հնարավորություն է տալիս ցանկացած պահի պատժել ցանկացած անձի աննշան փորձը համոզելու այն անձին, որին նա դիմում է:

Պատճառաբանությունը, որն ընդունվել է մեծամասնության կողմից, մտադրություն ունենալով սահմանափակվել այս մասնակի դեպքով, հավասարազոր է պետական դատարանը վերահսկելուն՝ կապված սահմանված պատժի խստության աստիճանի հետ, այն դեպքում, երբ խնդրո առարկան հենց բուն պատիժը սահմանելու սկզբունքն է, և Եվրոպական դատարանի գործառույթը չէ սահմանել ներպետական իրավունքում պատժի խստության աստիճանը: Դատարանը պետք է հավատարիմ մնա իր որոշումներին՝ կայացված Դադջեոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (1981թ. հոկտեմբերի 22-ի վճիռը, Շարքեր A, թիվ 45, էջ 18-19, կետ 41) և Նորիսն ընդդեմ Իռլանդիայի (1988թ. հոկտեմբերի 26-ի վճիռը, Շարքեր A, թիվ 142, էջ 16, կետ 33) գործերի կապակցությամբ. սոսկ դրույթը կիրառելու միայն վտանգը, նույնիսկ այն դեպքում, երբ այն գործածությունից դուրս է եկել, բավարար է խախտում արձանագրելու համար:

«Հոգեոսրություն, որը հարգված չէ» արտահայտությունը, որը որպես չափանիշ է կիրառվել Հունաստանի դատարանների կողմից օրենքը կիրառելիս, բավարար պայման է, որպեսզի և՛ դրույթը, և՛ դրա կիրառման պրակտիկան համարվեն 9-րդ հոդվածին հակասող:

Կառավարությունն ինքն է ընդունել, որ դիմողը հետապնդվել է, քանի որ փորձել է ներգործել այն անձի վրա, որի հետ զրույց է ունեցել՝ օգտվելով ուսմունքի կապակցությամբ նրա անփորձությունից և շահագործելով նրա ցածր մտավոր կարողությունները: Այդ իսկ պատճառով հարցը կայանում էր ոչ թե այլ անձանց ֆիզիկական և հոգեբանական ճնշումից պաշտպանելուն, այլ պետությանը հնարավորություն ընձեռելուն՝ անհիմն կերպով իրեն իրավունք վերապահելու գնահատել անձի թուլությունը՝ աղանդավորին պատժելու նպատակով. միջամտություն, որը կարող է չափազանց վտանգավոր դառնալ բռնատիրական պետությունում կիրառվելու դեպքում:

Մեղադրանքի աղոտությունը և հոգեոսրության հասկացության պարզ սահմանման բացակայությունն ավելացնում են այն կասկածները, որոնց տեղիք է տալիս Հունաստանի օրենքը: Նույնիսկ ընդունելով, որ Հունաստանում օրենքի կանխատեսելիությունը հոգեոսրների նկատմամբ կիրառվելու դեպքում բավարար էր, փաստը մնում է այն, որ սահմանման աղոտությունը՝ քրեական պատիժ որոշելու առումով, չափազանց մեծ տեղ է թողնում մեկնաբանությունների համար:

Կարող է հարց ծագել, թե արդյոք հոգեոսրության նկատմամբ քրեական օրենքի կիրառման սկզբունքն ինքնին համատեղելի է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի հետ:

Քրեական քաղաքականությունը կարող է իրագործվել այնպիսի հատուկ քրեական հանցանքների ստեղծման տեխնիկայի միջոցով, որոնք վերաբերում են այն հարկադրական գործողություններին և որոշ աղանդների գործունեությանը, որոնք իրապես ոտնահարում են անձի ազատությունը և արժանապատվությունը: Անչափահասները պետք է պաշտպանվեն ճշգրիտ քրեական դրույթների միջոցով: Չափահասների պաշտպանությունը կարող է ապահովվել ֆինանսական և սոցիալական ապահովության օրենսդրության միջոցով, ինչպես նաև խաբեության, մոլորեցման վտանգի առջև գտնվող անձանց չօգնելու և դիտավորությամբ կամ անզգուշությամբ վնաս (նույնիսկ՝ ֆիզիկական) հասցնելու վերաբերյալ սովորական օրենքների հիման վրա:

Բոլոր դեպքերում, նույնիսկ սկզբունքն ընդունելու դեպքում, այն չպետք է տանի դեպի այնպիսի օրենսդրության պահպանումը, որը տեղիք է տալիս քրեական

հանցանքների աղոտ սահմանման՝ մեղադրյալի դատապարտման կամ արդարացման հարցի որոշումը թողնելով դատարանների սուբյեկտիվ գնահատմանը: Լինգենսն ընդդեմ Ավստրիայի վճռում արտահայտվելու ազատության առնչությամբ (1986թ. հունիսի 8, Շարքեր A, թիվ 103) Եվրոպական դատարանը նշել է իր մտավախությունը ճշմարտության գաղափարի գնահատումը դատարաններին թողնելու վերաբերյալ:

Հոգեոսրության կապակցությամբ մեկնաբանման չափանիշները, որոնք նույնքան անորոշ են, որքան «հարգված կամ անհարգի» և «սխալ ընկալված» արտահայտությունները, չեն կարող ապահովել իրավական որոշակիությունը:

Հոգեոսրությունը կապված է կրոնի ազատության հետ. հավատացյալ անձը պետք է հնարավորություն ունենա կիսելու և փոխանցելու իր հավատքն ու համոզմունքները կրոնի բնագավառում այնպես, ինչպես փիլիսոփայության ոլորտում: Կրոնի և խղճի ազատությունը հիմնարար իրավունք է, և այս ազատության գործադրումը պետք է ծառայի բոլոր կրոնների շահերին, այլ ոչ թե մեկ եկեղեցու շահերին, նույնիսկ այն պարագայում, երբ այն ավանդաբար հաստատված եկեղեցի է կամ «գերիշխող կրոն»:

Կրոնի և խղճի ազատությունը որոշակիորեն ենթադրում է նաև հոգոսրության ընդունում, նույնիսկ եթե այն «հարգված չէ»: Հավատացյալները և ազնուստիկ փիլիսոփաները ունեն իրենց համոզմունքները տարածելու, այլ անձանց հետ այդ համոզմունքները կիսելու և նույնիսկ այդ անձանց իրենց կրոնին կան համոզմունքներին դարձնելու իրավունք:

Այս իրավունքի գործադրման սահմանափակումները թելադրվում են միայն այլ անձանց իրավունքները հարգելու անհրաժեշտությամբ, երբ անձը հարկադրվում է ընդունելու համոզմունքները, կամ երբ կիրառվում են նենգափոխ տեխնիկաներ:

Անընդունելի վարքագծի այլ տեսակները, ինչպես, օրինակ՝ մոլորեցնելը, աշխատանքային օրենսդրության խախտումները, հասարակական առողջության վտանգումը և բարոյականության խաթարումը, որոնք առկա են որոշ կեղծ կրոնական խմբերի պրակտիկայում, պետք է պատժվեն պոզիտիվ իրավունքի հիման վրա որպես հասարակ քրեական հանցանքներ: Հոգեոսրությունը չի կարելի արգելել նմանատիպ գործողությունները պատժելու անհրաժեշտության քողի ներքո:

Բնականաբար, հոգեոսրությունը չպետք է իրականացվի հարկադրական կամ անազնիվ միջոցներով՝ օգտագործելով անչափահասներին և համաձայն քաղաքացիական իրավունքի անգործունակ անձանց, սակայն նմանատիպ բացթողումները կարող են կարգավորվել սովորական քաղաքացիական և քրեական իրավունքով:

Երկրորդ հերթին, նույնիսկ եթե Դատարանը չգտներ օրենքի խախտում, իմ կարծիքով, այն կարող էր այլ կերպ ձևակերպել որոշումը՝ ավելացնելով մի քանի սահմանումներ այնպես, որ որոշման ազդեցության շրջանակները պատշաճ կերպով հասկացվեն:

Մեկնաբանները և անդամ պետությունները կարող են ավիսուել, որ ՄԱԿ-ի Համաշխարհային հանդուրժողականության տարվա նախօրեին և հաշվի առնելով Կրոնական անհանդուրժողականության վերաբերյալ ՄԱԿ-ի հռչակագիրը, Դատարանը այսպիսի բացառիկ կարևորության հարցում չկարողացավ ավելի ցայտուն արտահայտել հոգեոսրության իր մեկնաբանումը 9-րդ հոդվածով նախատեսված կրոնի ազատության առնչությամբ:

Պատճառաբանումը կարող էր նաև ավելի ցայտուն արտացոլել այն փաստը, որ 9-րդ հոդվածը կիրառվում է նաև ոչ կրոնական փիլիսոփայական հայացքների նկատմամբ, և որ դրա կիրառումը կոչված է պաշտպանելու անձանց որոշակի աղանդների չարաշահումներից. սակայն այստեղ արդեն, պետությունների պարտականությունն է այնպիսի օրենսդրական դաշտի ստեղծումը, որը համաձայն սովորական իրավունքի՝ կկանոնակարգի բոլոր այն շեղումները, որոնք տանում են մոլորեցնելու փորձերի: Ոչ քրեական հոգեոսրությունը շարունակում է հանդիսանալ

կրոնի ազատության հիմնական արտահայտումը: Որևէ մեկին իր կրոնից շեղելու փորձն ինքնին չի կարող համարվել այլ անձանց ազատության և համոզմունքների նկատմամբ ոտնձգություն կամ նրանց իրավունքների խախտում:

Կառավարությունն ընդունել է, որ թիվ 1363/1938 օրենքը չեղյալ չի համարվել 1975թ. Սահմանադրության ընդունումից հետո: Կառավարությունը վիճարկել է, որ Գերագույն վարչական դատարանի մի քանի վճիռներով ապահովվել է կրոնի ազատության արդյունավետ պաշտպանություն, սակայն փաստը մնում է այն, որ դատարանները մշտապես կարող են օրենքը կիրառել այնպես, ինչպես դա արվել էր Կոկինակիսի գործում: Ինչևէ, Ստրասբուրգի հաստատությունները չեն կարող վերահսկել 9-րդ հոդվածի հետ համատեղելիությունը՝ պատժի խստության աստիճանի և համաչափության հիմքի վրա:

Նույնիսկ գերծ մնալով Գունաստանի դատարանների որոշումը քննադատելուց՝ զրույցի բովանդակության և ապացույցների ստուգման առումով, ակնհայտ է, որ իրավունքի և Սահմանադրության հասկացություններում չկա ճշգրիտ բաժանարար գիծ վկայություն կրելու, անձի հավատքի կամ կրոնական համոզմունքների հռչակման և հարկադրման միջև: Գունաստանի դատարանների համաձայնություն չտված երկու դատավորներ ուշադրություն են հրավիրել որոշումների պատճառաբանությունների ոչ հիմնավոր, անհամոզիչ լինելու վրա:

Չանձնաժողովում վարույթի ընթացքում դիմողն իր ներկայացրած պատասխան գրավոր բացատրություններում առաջ է քաշել երկու կարևոր կետ.

« 1. Կրոնի հարցերում խղճի ազատության հռչակումը և դրսևորումը սկիզբ են առնում տարբեր սահմանադրություններում «հոգեորսության» արգելումից: Առաջին անգամ այն ամրագրվել է 1927թ. հունիսի 3-ի Սահմանադրությունում (հոդված 1, կետ 1 (գ)), իսկ այժմ ընդգրկված է «անձնական և սոցիալական» հիմնարար իրավունքների ցանկում, և ինչպես Չամընդհանուր հռչակագրում և Եվրոպական կոնվենցիայում որակված է որպես «նարդու իրավունքներ» (1975թ. հունիսի 9-ի Սահմանադրություն, հոդված 13, կետ 1, 25 և 28): Այսպիսով, Սահմանադրության բուն տեքստը պարունակում է անոմալիա, եթե ոչ վրդովեցուցիչ հակասություն: Չաշվի առնելով, որ 1938-39թթ. բռնապետության օրոք սահմանված օրենսդրական ակտերը վատթարացրել են իրավիճակը՝ հավասարեցնելով կրոնական համոզմունքները և դրանք բարձրաձայնելը քրեական հանցանքների, ինչի համար քրեական իրավունքում երբևէ չի եղել որևէ դրույթ (ինչպես արդեն նշվել է), կան համոզիչ պատճառներ ընդունելու համար, որ այս դրույթներն անհամատեղելի են այժմ գործող Սահմանադրության տառի և ոգու հետ: Կրոնական համոզմունքները բացահայտող կարծիքների արտահայտումը կամ անվնաս գործադրումը, կամ նույնիսկ այդ կարծիքի վերաբերյալ կասկածի առաջացումը, ինչպես Կոկինակիսի գործում, չեն կարող հավասարազոր լինել հանցանքի: Ահա այսպես պետք է կիրառվեր Սահմանադրությունն օրենսդրի, ինչպես նաև վարչական և դատական իշխանությունների կողմից: Անկասկած, ամենից առաջ սա է այն միակ ճիշտ ուղին Եվրոպական կոնվենցիային ենթարկվելու և իր իսկ հաստատությունների կողմից կիրառվելու առումով:

2. Պատասխանող Կառավարությունը վկայակոչում է մի շարք դատական որոշումներ, որոնք ըստ Կառավարության պնդման՝ ցույց են տալիս ոչ ուղղափառ եկեղեցու հետևորդ հավատացյալների գոյության և կրոնական գործունեության նկատմամբ հանդուրժողականությունը, ինչպես նաև մի առանձին գործի օրինակով, որը, վերջին հաշվով, ունի երկրորդական կարևորություն, հանդուրժողականությունը դիմողի կրոնը դավանող մի անձի նկատմամբ: Առաջին հերթին հարկ է նշել, որ նմանատիպ դատավճիռների առկայության փաստն արդեն ի ցույց է հանում այն, որ գոյություն ունի անհանդուրժողական վարչական պրակտիկա: Երկրորդը, որ նշված գործերը և դրանց ազատական հնչողություն ունեցող լուծումները հաստատված չեն: Եվ երրորդը, չի մատնանշվել որևէ որոշում, որը մերժել է այս մակարույծ քրեական

օրենսդրությունը, որը հնարավորություն է ստեղծում ոչ ուղղափառ քրիստոնյաների եզակի, սակայն դրանից ոչ ավելի պակաս դաժան և չարական հետապնդումների համար, քանի որ, ցավոք, նմանատիպ որոշումներ երբևէ չեն կայացվել: Բոլոր որոշումները ճանաչել են 1938թ. հրամանագրերի վավերականությունը և կիրառելիությունը:

Սակայն հարցը չի կայանում Յունաստանում 1938/39 թ. օրենքներում միտումնավոր կերպով սահմանված «հոգեորսության» սահմանադրական էության կապակցությամբ բանավիճելուն, քանի որ Եվրոպական կոնվենցիայի հաստատությունների միակ խնդիրը որոշելն է, թե արդյոք այս օրենքների դրույթները և դրանց՝ ի վնաս դիմողի կիրառումը՝ մինչև ներպետական պաշտպանության միջոցների սպառումը հանդիսանում են Կոնվենցիայի խախտումներ, որոնց համար պատասխանատու է Յունաստանի կառավարությունը»:

Յունաստանի կառավարությունը վկայակոչել է կրոնի ազատությունը պաշտպանելու սկզբունքին վերաբերող դրույթները:

Այս առումով Եվրոպական դատարանի պատճառաբանությունը, իմ կարծիքով, չի ապահովում բավարար չափանիշներ՝ գնահատելու համար հարաբերակցությունը աղանդավորության վերաբերյալ օրենսդրության և 9-րդ հոդվածի միջև:

Յոգևոր, կրոնական և փիլիսոփայական հանոգմունքները պատկանում են հանոգմունքների անձնական ոլորտին և կյանքի են կոչում դրանք արտահայտելու և դրսևորելու իրավունքները: Քրեական հետապնդումների և պատիժների համակարգի ստեղծումը՝ առանց երաշխիքների ապահովման, վտանգավոր նախաձեռնություն է: Բռնատիրական վարչակարգերը, որոնք իրենց սահմանադրություններում կրոնի ազատություն հռչակելու հետ մեկտեղ սահմանափակում են այդ ազատությունը՝ մակաբուծության, տապալման կամ հոգեորսության քրեական հանցանքներ ստեղծելով, հանգեցրել են չարաչափումների, որոնց մենք բոլորս քաջածանոթ ենք:

Այն ձևակերպումը, որ ընդունվել էր Դատարանի մեծամասնության կողմից խախտում արձանագրելիս, այն է, որ հաշվի առնելով գործի հանգամանքները՝ դիմողի դատապարտումը արդարացված չէր, չափազանց շատ տեղ է թողնում Յունաստանի դատարանների ճնշող մեկնաբանությունների համար ապագայում, այն դեպքում, երբ հասարակական հետապնդումները նույնպես պետք է վերահսկվեն: Իմ կարծիքով՝ կարելի էր ավելի պարզաբանված և ճշգրիտ կերպով սահմանել անպատշաճությունը, հարկադրումը և ճնշումը, ինչպես նաև բավականաչափ սպառիչ կերպով նկարագրել վերացականորեն կրոնի ազատության և վկայություն կրելու տարածման շրջանակները:

Եկեղեցիների Յանաշխարհային համաժողովը, Վատիկանի Երկրորդ խորհուրդը, ինչպես նաև փիլիսոփաները և հասարակագետները՝ խոսելով հարկադրանքի, այլ իրավունքները խախտող՝ անձի իրավունքների չարաչափման և խղճի ոտնահարմանը հանգեցնող միջոցներով անձանց մոլորեցնելու մասին, օգտագործում են այնպիսի ձևակերպումներ, որոնք հնարավորություն են ստեղծում սահմանելու հոգեորսության թույլատրելի շրջանակները: Այդ ձևակերպումները կարող են պոզիտիվ հիմք հանդիսանալ անդամ պետությունների համար՝ Դատարանի վճիռն ապագայում արդյունավետ օգտագործելու առումով, ինչպես նաև Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված կրոնի ազատության վերաբերյալ սկզբունքների և չափորոշիչների լիարժեք կիրառման համար:

ԴԱՏԱՎՈՐ ԴԵ ՄԵՅԵՐԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ
(Թարգմանություն)

Աղանդավորությունը, որը սահմանվում է որպես «հավատքը տարածելու մեծ եռանդ», չի կարող պատժվել այդպիսին լինելու համար. դա ինքնին «[անձի] հավատ դրսևորելու» բացարձակապես օրինական եղանակ է:

Տվյալ գործում դիմողը դատապարտվել է ընդամենն իր կողմից առանց որևէ անպատշաճության այդ եռանդը ցուցաբերելու պատճառով:

Նա կարող էր մեղադրվել միայն նրանում, որ փորձել է համոզել տվյալ Կիրիակակիին կիսելու իր կրոնական հավատքը: Տկն Կիրիակակին թույլ է տվել նրան մտնել իր տուն, և չկա ոչ մի փաստ, որը ցույց կտար, որ նա ինչ-որ պահի փորձել է դուրս հրավիրել դիմողին: Տկն Կիրիակակին գերադասել է լսել դիմողի ասելիքը՝ ոստիկանության գալու և սպասելով, որին ահազանգել էր նրա ամուսինը՝ քահանան:

ԴԱՏԱՎՈՐ ՎԱՆՏԻԿՈՍԻ ԶՅԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ (Թարգմանություն)

Ես ցավում եմ, որ չեմ կարող կիսել Դատարանի մեծամասնության կարծիքը, և ես նույնքան ցավում եմ, որ նրանք չէին կարող համաձայնել իմ կարծիքին: Իմ անհամաձայնությունը վերաբերում է ինչպես 9-րդ հոդվածի կիրառման շրջանակներին, այնպես էլ գործի փաստերի զնահատմանը:

Ինչ վերաբերում է 9-րդ հոդվածի շրջանակներին, ապա ես անկարող եմ մեկնաբանել «միանձնյա կամ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն» ձևակերպումը՝ այնքան տարածական և ընդարձակ, ինչպես դա անում է մեծամասնությունը: Ինչպես բոլոր ազատությունների դեպքում, այնպես էլ կրոնի ազատության պարագայում, մեկ անձի ազատությունը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է մյուսինը: «Միանձնյա կամ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատությունը» նշանակում է այդ հավատքին դավանելու և այն դրսևորելու ազատություն, սակայն դա չի նշանակում հետևողականորեն փորձել պայքարել և փոխել այլ անձանց կրոնը, ներգործել անձանց գիտակցության վրա՝ ակտիվ և հաճախ ոչ ողջամիտ քարոզչությամբ: Այդ դրույթը միտված է ապահովելու կրոնական խաղաղություն և հանդուրժողականություն, և չթույլատրելու կրոնական բախումներ և նույնիսկ պատերազմներ, հատկապես մի այնպիսի ժամանակ, երբ բազմաթիվ աղանդներ կասկածելի միջոցներով շեղում են պարզամիտներին և միամիտներին: Սակայն նույնիսկ այն դեպքում, եթե Պալատը համարում է, որ դրա նպատակն այդ չէ, միևնույն է, բոլոր դեպքերում, դա է այն ուղղությունը, ուր տանում է նման մոտեցումը:

Այս փուլում բոլոր թյուրիմացությունները պետք է վերացվեն. ընդունվել է, որ այն գրույցը, որի ընթացքում անձն ընդամենն արտահայտում է իր կրոնական հավատքները, չի կարող համարվել մյուսների կրոնի նկատմամբ ոտնձգություն: Իրականության մեջ, տվյալ գործում վիճակն այլ է: Մեկ այլ գործի կապակցությամբ (Յոն Գոնզալեսի գործը), որը քննության էր առնվել մեկ այլ Պալատի կողմից, Հանձնաժողովն իր զեկույցում նշում է (կետ 27), որ զանգատվողը, որը նույնպես հանդիսանում էր Եհովայի վկա, շաբաթական մեկ անգամ կատարում էր այցելություններ՝ իր հավատքը տարածելու նպատակով: Այդ իսկ պատճառով այս աղանդի դեպքում առկա է կրոնը փոխելու պարբերական փորձի փաստ և, հետևաբար, այլ անձանց կրոնական համոզմունքի նկատմամբ ոտնձգություն: Դա ոչ մի առնչություն չունի 9-րդ հոդվածի հետ, որը կոչված է միայն պաշտպանելու անհատների կրոնը, և ոչ թե նրանց իրավունքը՝ մյուսների կրոնի նկատմամբ ոտնձգություն կատարելու:

Ես կարող եմ ավելացնել, որ 9-րդ հոդվածում տեղ գտած «ուսուցանել» տերմինը, անկասկած, վերաբերում է դպրոցի կամ կրոնական հաստատության ծրագրում կրոնական ուսմունքին, այլ ոչ թե տնտեսում ընկած՝ անհատական վիճաբանության, ինչպես տվյալ գործում է:

Այսպիսով, գանք ներկա գործին:

Այն բաղկացած է երեք ասպեկտներից. ներպետական իրավունքը, բավականաչափ խոսում փաստերը և դատական որոշումները:

Առաջին հերթին՝ օրենքը. արդյո՞ք այն պարզ է և ճշգրիտ, թե դրանում առկա է բազմանշանակության, չափազանց ընդհանրական լինելու տարր, որը կարող էր թույլ տալ կամայականություն՝ այն որպես քրեական օրենք կիրառելիս: Իմ կարծիքով, կասկածների տեղ չկա: Օրենքը որպես հանցանք գործ ունի «հոգեորսության» հետ, որը հունարեն բառ է, և բազմաթիվ այլ բառերի շարքում թարգմանվել է անզգերեն և ֆրանսերեն, և Պետիտ Ռոբերի բառարանում սահմանված է, որպես «մեծ եռանդ հավատքը տարածելու, և տարածվելով՝ հոգեորսներ և նոր հետևորդներ ներգրավելու գործում»: Սա չափազանց հեռու է լուր անձի հավատքի դրսևորումից, ինչին վերաբերում է 9-րդ հոդվածը: Անձը, որը զբաղվում է հոգեորսությամբ, ակնկալում է մյուսներին շեղել դեպի իր հավատքը: Նա ոչ թե սահմանափակվում է իր հավատքի հաստատմամբ, այլ ցանկանում է փոխել մյուսներին՝ ներգրավելով իր հավատքի մեջ: Պետիտ Ռոբերը հստակեցնում է իր բացատրությունը՝ ներկայացնելով Կլոդ Վալերիից հետևյալ մեջբերումը. «Ես համարում եմ, որ նսեմություն է ցանկանալը, որ ուրիշները համաձայնեն մեկի կարծիքին: Հոգեորսությունն ապշեցնում է ինձ»:

Մինչդեռ «հոգեորսություն» տերմինը, իմ կարծիքով, կարող է լիարժեքորեն սահմանել հանցանքը և բավարարել այն սկզբունքը, որ հանցանքը պետք է սահմանվի իրավունքով. Հունաստանի քրեական իրավունքը, անորոշություններից խուսափելու նպատակով, տալիս է դրա նկարագրությունը, որը, լինելով բացատրություն և օրինակ (անկասկած, ամենատարածվածը), այնուամենայնիվ, հանդիսանում է իմաստալից սահմանում, այն է՝ «հոգեորսություն» ասելով մասնավորապես ենթադրվում է ցանկացած ուղղակի կամ անուղղակի փորձ այլ կրոնի դավանող որևէ անհատի հավատքին միջամտելու՝ այն խարխուլելու նպատակ հետապնդելով, դա իրականացնելով երաշխիքների կամ երաշխիքների խոստումների միջոցով, կամ բարոյական և նյութական օժանդակությամբ, ինչպես նաև խարդախությամբ կամ օգտվելով դիմացինի անփորձությունից, վստահությունից, կարիքավորությունից, ցածր մտավոր կարողությունից կամ միամտությունից»:

Այս, եթե կարելի է այդպես արտահայտվել, այլ անձանց հավատքի բռնաբարության սահմանումը չի կարող ոչ մի առումով համարվել Կոնվենցիայի 9-րդ հոդվածին հակասող: Ընդհակառակը, այն նախատեսված է անհատների կրոնական հավատքի ազատությունը պաշտպանելու նպատակով:

Այժմ եկեք դիտարկենք գործի փաստերը: Մի կողմից մենք ունենք ռազմատենչ Եհովայի վկա, աղանդավորության տոկուն հետևորդ, զրույցների մասնագետ, քրեական դատարանների թիրախ, որի նախորդող դատապարտումները միայն օգնել են նրան ավելի ամուր դառնալ իր ռազմատենչության մեջ և, մյուս կողմից՝ իդեալական զոհ՝ մի միամիտ կին, ուղղափառ եկեղեցու քահանայի կին (ինչպիսի հաղթանակ, եթե նա կարողանա շեղել այդ կնոջը դեպի իր հավատքը): Նա վրա է տալիս կնոջ վրա, ազդարարում է, թե բարի լուրեր է բերել նրան (բառախաղն ակնհայտ է, բայց, անկասկած, ոչ կնոջ համար), նա կարողանում է ներս մտնել և իր հավատքը տարածող փորձառու առևտրականի և խորամանկ մատակարարողի նման ներկայացնում է նրան իր մտավոր արտադրանքը, որը խորամանկորեն պարուրված է համաշխարհային խաղաղության և շլացուցիչ երջանկության շղարշով: Իսկապես, ո՞վ չէր ցանկանա խաղաղություն և երջանկություն: Սակայն արդյո՞ք սա պրն Կոկինակիսի հավատքի իրական նկարագիրն է, արդյո՞ք իրականում դա փորձ չէր խաբելությամբ

մուղորեցնել քահանայի պարզամիտ կնոջը: Արդյո՞ք Կոնվենցիան ապահովում է նրա պաշտպանությունը նմանատիպ ոտնձգություններից: Իհարկե՝ ոչ:

Հարկ է նշել ևս մեկ հանգամանք: Հունաստանի իրավունքը ոչ մի կերպ հոգեորսության հասկացությունը չի սահմանափակում ուղղափառ քրիստոնյաներին մտավոր քայքայման փորձերից պաշտպանելով, այլ կիրառվում է անկախ կրոնից: Ընդունում են, որ Կառավարության պատվիրակը չի կարողացել բերել այնպիսի օրինակներ, որոնք կվերաբերեին այլ կրոնների, սակայն սա չի կարող զարմանալի լինել, քանի որ ուղղափառ կրոնին է դավանում գրեթե ողջ բնակչությունը, և աղանդներն իրենց հետևորդներին որսում են ամենալավ տեսակի միջից:

Հավանաբար, վերջին տարիների ընթացքում իսկապես հետապնդումների քանակը չափազանց մեծ էր, իսկ ոստիկանությունը՝ չափազանց ակտիվ: Սակայն վերջերս նկատվում է նմանատիպ հետապնդումների թվի զգալի անկում, և տվյալ գործում չի եղել պաշտոնական հետապնդում: Ջոհի ամուսինն էր, որը տուն վերադառնալով և տեսնելով, թե տնական քարոզիչը ինչու է զբաղված, բարձրացրել է իր ձայնը, որը բավականաչափ զորեղ էր ոստիկանություն կանչելու համար:

Ես մտադրություն ունեմ խորհուրդ տալու Կառավարությանը կարգադրություններ անել այն հարցի կապակցությամբ, որ այն դեպքերում, երբ հարցը վերաբերում է անվնաս գրույցներին, պետք է խուսափել հետապնդումներից, սակայն ոչ այն դեպքերում, երբ առկա է պարբերական, հետևողական ծրագիր, որի իրականացման համար ձեռնարկվում են գործողություններ, որոնք գտնվում են անօրինականության սահմանագծին:

Հաշվի առնելով վերոնշյալը, ես չեմ համարում, որ խախտվել է Կոնվենցիայի որևէ դրույթ:

P.S. Կարդալով վճռին կից մի քանի առանձին կարծիքներ՝ ես պետք է իմ ափսոսանքը հայտնեմ, որ չափազանցությունները հասնում են այն աստիճանի, որ խոսվում է բռնապետական վարչակարգերի մասին:

Ես նաև կուզեի մտահոգություն հայտնել այն կարծիքի վերաբերյալ, որ «հոգեորսության փորձն ինքնին չի հանդիսանում ոտնձգություն այլ անձանց ազատության կամ հավատքի նկատմամբ կամ նրանց իրավունքների խախտում»:
Իհարկե, դա չափավորության և առողջ բանականության արտահայտում է, և Պալատը (միգրացե նաև լիակազմ Դատարանը պետք է անդրադառնար այդ հարցին) իրավացիորեն է մտահոգություն հայտնել աղանդավորության հետ կապված չարաշահումների կապակցությամբ: Սակայն հավատքը երբեմն կարող է կույր լինել, իսկ այն տարածելու փորձերը՝ չափից ավելի եռանդուն: Հավատքի համար կատարված գործողությունները երբեմն իրենց զագաթնակետում բերել են autos-da-fe-ի, իսկ այս հարցի կապակցությամբ հարցադրումները բերել են ինկվիզիցիաների, միևնույն ժամանակ որոշ սրբերի անուններ շարունակում են կապվել այդ սրբերի տոների ժամանակ տեղի ունեցած պատահարների հետ: Ինչպես բազմաթիվ այլ հարցերում, հավատքի հարցում նույնպես մարդու նկատմամբ հարգանքը պետք է լինի առաջնային:

Այն ժամանակ, երբ տարբեր աստիճանի ճանաչվածություն ունեցող աղանդների, իսկ երբեմն նաև ընդունված կրոնների հետևորդները, ֆանատիզմի ազդեցության տակ գտնվելով՝ դիմում են հոգեորսության բոլոր տեսակի միջոցների, որոնք երբեմն, ինչպես վերջերս գրանցված դեպքերից մեկում, ունենում են դժբախտ ավարտ, ցավալի է, որը վերոնշյալ վճիռը թույլ է տալիս հոգեորսության գործունեությունը միակ պայմանով, որ այն չպետք է լինի «անպատշաճ»: Արդյո՞ք Մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիան կարող է թույլ տալ անձանց հավատքին նմանատիպ միջամտություն, նույնիսկ եթե միջամտելիս չեն դիմում ուժի:

ՊԱՏԱՎՈՐ ՄԱՐՏԵՆՍԻ ՄԱՍՆԱԿԻ ՉՀԱՄԱՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ես համամիտ եմ Ղատարանի այն կարծիքին, որ 9-րդ հոդվածը խախտվել է, սակայն իմ համաձայնության հիմնավորումը այլ է Ղատարանի վկայակոչածից: Ավելին, իմ կարծիքը տարբերվում է Ղատարանի կարծիքից նաև այն առումով, որ ես գտնում եմ, որ խախտվել է նաև 7-րդ հոդվածը:

2. Ես նաև համաձայն եմ Ղատարանի հետ այն հարցում, որ 9-րդ հոդվածի խնդրո առարկան շատ ավելի կարևոր է, և ես կողջունեի, եթե Ղատարանը վճռեր, ինչն իմ կարծիքով հեշտությամբ կարող էր անել, որ հաշվի առնելով 9-րդ հոդվածի հետ կապված իր եզրահանգումները՝ անհրաժեշտություն չկար քննության առնելու դիմողի՝ 7-րդ հոդվածի հիման վրա ներկայացրած գամգատները:

Ես կզերադասեի, որ Ղատարանն ընտրեր այդ տարբերակը, քանի որ դա ինձ հնարավորություն կտար հետևելու նրան. մինչդեռ այժմ, չկարողանալով համաձայնել 7-րդ հոդվածի առումով Ղատարանի եզրահանգումներին, ես ստիպված եմ քննարկել, թե արդյոք այդ հոդվածը խախտվել է քրեական դրույթի ձևակերպմամբ, թե դրա կիրառումով հաշվի առնելով, որ այդ դրույթի գոյությունն իսկ, իմ կարծիքով, արդեն իսկ խախտում է 9-րդ հոդվածը:

Որքան էլ տեսական թվա նմանատիպ մտավարժանքը, այն անխուսափելի է: Եվ քանի որ այն կարող է ծառայել որպես ներածություն 9-րդ հոդվածի հետ կապված հիմնախնդրի՝ իմ քննարկման համար, ես կսկսեմ՝ պարզաբանելով 7-րդ հոդվածի կապակցությամբ իմ տեսակետը:

3. Մինչ այդ, ես կկամենայի նշել, որ չնայած այն հանգամանքին, որ երկու կողմերն էլ իրավացիորեն վեճը բարձրացրել են կարևոր սկզբունքի քննարկման մակարդակի, այնուամենայնիվ, չի կարելի մոռանալ, որ այդ քննարկումը սկիզբ է առել երկու տարեց Եհովայի վկաների (այդ պահին դիմողը 77 տարեկան էր) սովորական և բացարձակապես անվնաս այցելությունից՝ նպատակ ունենալով վաճառել աղանդի գրքույկներից մի քանիսը մի կնոջ, որը դուռը փակելու փոխարեն՝ ներս է թողել ծերունիների գույզին: Ներս էր թողել կամ այն պատճառով, որ չի կարողացել դիմակայել նրանց համառությանը, կամ էլ այն պատճառով, որ իսկապես հավատացել է, որ նրանք մայրցամաքում բնակվող իր բարեկամներից իրեն նորություններ են բերել: Չկա բռնության ոչ մի նշան կամ որևէ այլ բան, որը կարող է իսկապես անվանվել «հարկադրում». վատթարագույն որակումը, որն այստեղ տեղին կլիներ, դա սովորական սուտն է: Եթե նույնիսկ կար պահանջ քրեական իրավունքին դիմելու, ապա հնարավոր խստագույն պատասխանը կարող էր լինել հետապնդումը տնային հանգիստը խանգարելու համար:

ԱՐԴՅՈ՞Ք 7-ՐԴ ՀՈՂՎԱԾԸ ԽԱՎՏՎԵԼ Է:

4. Ընդհանուր առմամբ, ես պատրաստ եմ ստորագրել 50-րդ կետի առաջին կետում 7-րդ հոդվածի կապակցությամբ Ղատարանի տեսակետի տակ, չնայած որ, ի տարբերություն Ղատարանի, ես համոզված եմ, որ այն պահանջը, ինչը վերաբերում է հանցագործության իրավական սահմանման հնարավորինս ճշգրիտ ձևակերպմանը, հանդիսանում է 7-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված սկզբունքի անբաժան մասը, այլ ոչ թե դրա հետևանքը:

Ավելին, ես համոզված եմ, որ այս պահանջի նպատակն է ոչ միայն անհատին հնարավորություն տալ գիտենալու «այն գործողությունները և անգործությունը, որոնց համար նա կարող է ենթարկվել պատասխանատվության» (ինչպես սահմանել է Ղատարանը 50-րդ կետի երկրորդ հատվածում), այլ նաև, առաջին հերթին, իր պատմական ակունքներին համապատասխան, հիմնականում կոչված է ապահովելու անձանց համապատասխան պաշտպանությունը կամայական հետապնդումից և դատապարտումից. 7-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է, որպեսզի քրեական իրավունքը համատեղելի լինի իրավական պետության սկզբունքի հետ:

5. Որքան մտածում եմ այս հարցի շուրջ, այնքան ավելի է աճում իմ անբավարարվածությունը՝ կապված այն հանգամանքի հետ, որ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժինը սահմանում է հոգեորությունը՝ նմանատիպ ընկալմամբ, 7-րդ հոդվածով նախատեսված ճշգրտության աստիճանով:

Առաջին՝ կամայականությունից պաշտպանելու առումով ամենակասկածելի ձևակերպումը դա աղոտ «մասնավորապես» արտահայտությունն է. այս խոսքը, փաստորեն, հնարավոր է դարձնում հետապնդումն այնպիսի գործողությունների համար, որոնք դուրս են տրված սահմանման շրջանակներից: Երկրորդ՝ պատժելի գործողությունը (ըստ սահմանման) ոչ թե «միջամտությունն է կրոնական հավատքին» (ինչպիսին էլ այն լինի), այլ այդպիսի միջամտության «ցանկացած ուղղակի կամ անուղղակի փորձը», ինչը ոչ միայն զգալի կերպով ընդլայնում է սահմանումը, այլ նաև մեծապես նպաստում է դրա ընդհանուր աղոտությանը: Վերջին կետը, որը հարկ է նշել, դա «այդ համոզմունքները խարխլելու նպատակով» պահանջի վտանգավոր երկիմաստությունն է. արդյո՞ք ընդհանրապես հնարավոր է տարբերակել անձի կողմից իր հավատքը մյուսներին ներկայացնելը և այդ մյուսներին իրենց համոզմունքների «սխալ» լինելում համոզելու փորձը:

Այս թերացումները այնպիսին են, որ կրոնական անհանդուրժողականության մթնոլորտում, թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժինը տրամադրում է կատարյալ և վտանգավոր գործիք հետերոդոքս փոքրամասնություններին ճնշելու համար: Պատմությունը վկայում է, որ անցյալում այն իսկապես օգտագործվել է այդ նպատակով, մինչդեռ այժմ, մեղմ ասած, նմանատիպ կիրառումը կարծես դեռևս ամբողջովին բացառված չէ: Հարցի այս կտրվածքը ձեռք է բերում ավելի մեծ կարևորություն՝ հաշվի առնելով, որ հարավարևելյան Եվրոպայում ներկայումս առկա իրավիճակը ցույց է տալիս, որ այս տարածաշրջանն ամենևին էլ ձերբազատված չէ կրոնական կատաղի անհանդուրժողականության վտանգից, որը համակում է ժամանակակից աշխարհը:

Սա է պատճառը, որ ինձ ամենևին չի ոգևորում այն հակափաստարկը, որ այս թերացումները «շտկվում են» հատկապես Հունաստանի բարձրագույն դատարանների, նախադեպային իրավունքով: Հնարավոր է, որ, օրինակ՝ 1975թ. ի վեր Վճռաբեկ դատարանը, վերանայելով իր նախկին նախադեպային իրավունքը, վերացրել է «մասնավորապես» արտահայտության հետևանքները, և որ Գերագույն վարչական դատարանի սահմանումը զոնե փորձում է հաշվի առնել անձի՝ իր կրոնը դավանելու և մեկ ուրիշին՝ իր համոզմունքների մակերեսայնության մեջ համոզելու փորձի միջև վերոնշյալ տարբերակումը: Սակայն նորագույն պատմությունից մենք սովորել ենք, որ եթե մի երկրում փոխվում է քաղաքական կամ կրոնական մթնոլորտը՝ փոխվում է նաև նույնիսկ ամենաբարձր ատյանի դատարանների նախադեպային իրավունքը: Ուստի նախադեպային իրավունքը չի կարող լրացնել ընդդեմ կամայականության այն երաշխիքները, որոնք նախատեսված չեն օրենքի տեքստում:

6. Ինչպես նշում է Ղատարանը, 7-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված է այն սկզբունքը, որ քրեական իրավունքի մեկնաբանումը պետք է լինի խիստ սահմանափակ: Այս սկզբունքի դերը կայանում է նրանում, որ այն երկրորդական երաշխիք է ընդդեմ կամայականության: Հետևաբար, որքան ավելի ընդարձակ և աղոտ լինի համապատասխան դրույթը, այնքան ավելի կկարևորվի այս երկրորդական

երաշխիքի դերը: Ինչպես նաև ավելի կկարևորվի Կոնվենցիայի հաստատությունների վերահսկողական դերը:

Ինչպես բազմիցս նշել է Հանձնաժողովը, Կոնվենցիայի հաստատությունները լիազորված են 7-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա հաստատելու, հաշվի առնելով գործի փաստերը, արդյոք ներպետական դատարանները կարող էին ողջամտորեն հասնել դատապարտման՝ տեղական իրավունքի կիրառելի նորմի հիման վրա. Կոնվենցիայի հաստատությունները պետք է հավաստիանան, որ դատապարտումը ոչ միայն հիմնված էր քրեական իրավունքի նախապես գոյություն ունեցող (և բավականաչափ ճշգրտորեն ձևակերպված) դրույթի վրա, այլ նաև չէր հակասում քրեական իրավունքի սահմանափակ մեկնաբանման սկզբունքին: Որքան ավելի մեծ լինեն Կոնվենցիայի հաստատությունների կասկածները կիրառված դրույթի՝ ճշգրտության պահանջը բավարարելու վերաբերյալ, այնքան ավելի խիստ պետք է լինի այդ հաստատությունների կողմից դրա կիրառման վերահսկումը:

7. Տվյալ գործում դիմողը գանգատվում է «իր պնդմամբ իր նկատմամբ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի սխալ կիրառման» դեմ: Բարձրացված հարցերից մեկը վերաբերում է նրան, թե արդյոք ի վնաս դիմողի հաստատված փաստերն արդարացնում էին այդ բաժնի հիման վրա նրա դատապարտումը (տե՛ս Հանձնաժողովի զեկույցի 60-րդ կետը): Ճշմարիտ է, որ այս հարցը բարձրացվել էր գլխավորապես 9-րդ հոդվածի համատեքստում, սակայն, հաշվի առնելով Դատարանի հմտությունը՝ իր քննությանը հանձնված փաստերին իրավական որակումներ տալու հարցում, կարելի է նաև մանրամասնորեն քննել, թե արդյոք Հունաստանի դատարանները հարգել են քրեական իրավունքի սահմանափակ մեկնաբանման սկզբունքը:

8. Թույլ տվեք ինձ միանգամից ասել, որ քննելով կողմերի ներկայացրած՝ Հունաստանի դատարանների դատավճիռների ամբողջական (թարգմանված) տեքստերը, ես եկել եմ այն եզրակացության, որ այս հարցի պատասխանը ժխտական է:

Մինչ զարգացնելն այն երեք հենակետերը, որոնց վրա հիմնվում է իմ եզրակացությունը, ես չեմ կարող չնշել այս գործի խոսում, սակայն տվյալ գործի համար կարևորություն չներկայացնող առանձնահատկություններից մեկը. չնայած այն հանգամանքին, որ և՛ դիմողը, և՛ նրա կինը հետևողականորեն մերժել են տկն Կիրիակակիի ներկայացրած փաստերի վարկածը, նրա դատապարտումը հիմնականում և բացառապես հիմնված էր այդ վարկածի վրա, և հետևաբար, հաշվի առնելով բոլոր գործնական պատճառները, հիմնված է միայն մեկ վկայի ցուցմունքների վրա:

9. Վերոնշյալ մտահոգությունների համար առաջին պատճառը հետևյալն է:

Թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնը ենթադրում է զոհին՝ օրինազանցի հավատքին դարձնելու (ինչպես կիրառվում է «հոգեորսություն» տերմինը), կամ ամենաքիչը՝ զոհի հավատքը խարխլելու մտադրություն: Սակայն դիմողը հերքել է, որ ունեցել է այդպիսի մտադրություն: Նա նշել է, որ իր միակ մտադրությունը եղել է ընդամենը «վկայությունը», այն է՝ քարոզել Ավետարանն այնպես, ինչպես այն ըմբռնում է իր աղանդը: Իհարկե, գոյություն ունի հիմնարար, իսկ տվյալ համատեքստում նաև՝ վճռական տարբերություն, մի կողմից, մեկին կարծիքի կամ հավատքի հետ ծանոթացնելու, իսկ, մյուս կողմից՝ այդ անձին դրա ճշմարտացի լինելուն համոզելու միջև: Հունաստանի դատարանները պարզապես անտեսել են այս տարբերությունը, առանց նույնիսկ փորձելու բացատրել, թե որոնք են այն փաստարկները, որոնց վրա հիմնվում է իրենց այն կարծիքը, որ նա մտադրություն է ունեցել համոզելու տկն Կիրիակակիին իր հավատքի՝ ճիշտ, իսկ տկն Կիրիակակիի հավատքի սխալ լինելուն: Պետք է նշել, որ այդ կարծիքն անպայմանորեն ունեցել է իր դերը դիմողին «հոգեորսության» մեղադրանքով մեղավոր ճանաչելուն:

Այսպիսով՝ անխուսափելի է այն հետևությունը, որ դիմողի դատապարտումը հիմնված էր այն կարծիքի վրա, որ անձի կրոնական հավատքի սոսկ դրսևորումը, եթե այն տարբերվում է զրուցակցի հավատքից, արդեն իսկ ենթադրում է 4-րդ բաժնի իմաստով նրան կրոնափոխելու փորձ: Սակայն, սա ակնհայտորեն անհամատեղելի է քրեական օրենսդրության սահմանափակ մեկնաբանման սկզբունքի հետ:

10. Երկրորդ պատճառն առնչվում է հարակից հարցի հետ: Համապատասխան դատավճիռներից ակնհայտ է դառնում, որ Հունաստանի դատարանները չափազանց աղոտ պատկերացում ունեին այն մասին, թե հատկապես ինչ է ասել դիմողը տկն Կիրիակակիին:

Առաջին ատյանի դատարանում տկն Կիրիակակիի և նրա՝ ականջ դնող ամուսնու վկայություններից կարելի էր ենթադրել, որ դիմողը ինչ-որ կերպ անդրադարձել էր դրախտի արքայության գալստյանը: Վերաքննիչ դատարանում, սակայն, տկն Կիրիակակիին չի կարողացել հիշել, թե արդյոք դրա մասին խոսվել է, թե՛ ոչ: Նրա ամուսինը նույնպես չէր կարողացել ներկայացնել իր լսածի մանրամասները: Ցուցմունքները ներառում էին հավասարաչափ աղոտ հղում դրախտի մասին պատմությանը, ինչպես նաև տկն Կիրիակակիի վկայությունը, որում ասվում էր. «Նրանք խոսեցին ինձ հետ Քրիստոսի մասին»:

Ստիպված եմ հարցնել, թե ինչպես են Հունաստանի դատարանները կարողացել գալ այն եզրակացության, ինչը որ նրանք արել են, որ դիմողը (միտումնավոր կերպով) փորձել է պարտադրել տկն Կիրիակակիին փոխել իր հավատքը, առանց գոնե պարզելու, թե կոնկրետ ինչ է նա ասել, և թե արդյոք այն ինչ որ նա ասել է, հակասել է նրան, ինչին հավատում է տկն Կիրիակակիին:

Այստեղ նույնպես, բաղդատելով փաստերը 4-րդ բաժնի տեքստի հետ, ես գտնում եմ, որ միակ հնարավոր եզրակացությունն այն է, որ դիմողի դատապարտումն անհամատեղելի է քրեական օրենսդրության սահմանափակ մեկնաբանման սկզբունքի հետ:

11. Երրորդ և վերջին պատճառը վերաբերում է Հունաստանի դատարաններում անանուն չհամաձայնողների քննադատությանը: Միակ ապացույցը, որ դիմողը (կանխամտածված կերպով) օգտագործել է տկն Կիրիակակիի «անփորձությունը, նրա ցածր մտավոր կարողությունները և միամտությունը» (ինչպես սահմանվել էր Կրետեի վերաքննիչ դատարանի կողմից), նրա այն ցուցմունքն էր, որ ինքն ամբողջությամբ չէր հասկանում այն ամենը, ինչ նրա համար կարդում էր և նրան պատմում էր դիմողը: Վերաքննիչ դատարանում նա նույնիսկ ասել է. «Նրանք ինձ հետ խոսում էին այնպիսի հարցերի շուրջ, որոնք ես լավ չէի հասկանում»:

Սա բավարար էր Հունաստանի դատարանների համար՝ վճռելիս, որ դիմողը (դիտավորությամբ) «չարաշահել էր» տկն Կիրիակակիի «անփորձությունն այս ուսմունքում», և «շահագործել էր» նրա «հոգու միամտությունը» (ինչպես սահմանվել էր Վճռաբեկ դատարանի կողմից): Սա միայն կարող է նշանակել, որ դիմողի դատապարտումը հիմնված էր այն տեսակետի վրա, որ երբ անձն իր հավատքը ներկայացնում է հետերողոքս անձին, որի փորձը և մտավոր կարողությունները կրոնական հարցերում զիջում են տվյալ անձի կարողություններին, ապա վերջինս 4-րդ բաժնի հիման վրա պետք է մեղավոր ճանաչվի: Կրկին ստիպված եմ եզրակացնել, որ այն եղանակը, որով Հունաստանի դատարանները կիրառել են 4-րդ բաժինը, անհամատեղելի է քրեական օրենսդրության սահմանափակ մեկնաբանման սկզբունքի հետ:

12. Այսպիսով, իմ եզրակացությունն այն է, որ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժինը per se անհամատեղելի է Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի հետ, և որ տվյալ գործում դրա կիրառումից բխել է այդ հոդվածի մեկ այլ խախտում:

ԱՐԴՅՈ՞Ք 9-ՐԴ ՀՈՂՎԱԾԸ ԽԱԽՏՎԵԼ Է:

13. Դատարանի վճիռը միայն հպանցիկ է անդրադառնում այն հարցին, որը, իմ կարծիքով, վճռական է այս գործում. արդյո՞ք 9-րդ հոդվածը թույլ է տալիս անդամ պետություններին՝ անձին իր կրոնը փոխելու համոզելու փորձը համարել քրեական հանցանք: Դատելով 40-42-րդ և 46-րդ կետերում ասվածից՝ պարզ է դառնում, որ Դատարանի պատասխանը դրական է: Իմ պատասխանը բացասական է:

14. Մարդու իրավունքների հիմնարար սկզբունքն անձի արժանապատվության և մարդու ազատությունների նկատմամբ հարգանքն է: Այդ արժանապատվության և ազատությունների համար կարևոր դեր ունեն 9-րդ հոդվածի 1-ին կետով ապահովվող՝ մտքի, խղճի և կրոնի ազատությունները: Յետևաբար, դրանք բացարձակ են: Կոնվենցիան տեղ չի թողնում պետությունների միջամտության համար:

Այս բացարձակ ազատություններն ակնհայտորեն ներառում են կրոնը կամ հավատքը փոխելու անձի ազատությունը: Պետություններին չի կարող վերաբերել անձի մտադրությունը՝ փոխելու իր կրոնը. հետևաբար, սկզբունքայնորեն պետության գործը չէ նաև այն, երբ մեկ անձ փորձում է համոզել մեկ ուրիշին փոխելու իր կրոնը:

15. 9-րդ հոդվածում սահմանելը, որ կրոնի ազատություն նշանակում է նաև այդ կրոնը ուսուցանելու ազատություն, ուներ հիմնավորված պատճառներ, քանի որ բազմաթիվ կրոնական հավատքներ համարում են, որ հավատքի ուսուցումը հավատացյալների հիմնական պարտականություններից մեկն է: Ընդունում են, որ նմանատիպ ուսուցումը կարող է աստիճանաբար վերածվել հոգեորսության: Ավելին, ճշմարիտ է, որ հոգեորսությունն ստեղծում է հնարավոր «բախում» կրոնի ազատության իրավունքի երկու կողմերի միջև. այն սահմանում է նրանց իրավունքները, որոնց կրոնական հավատքը խրախուսում է կամ պահանջում այնպիսի գործունեություն, որն ուղղված է մյուսների՝ իրենց հավատքը հաստատելու իրավունքի դեմ:

Սակայն, սկզբունքորեն, Պետության իրավասությունից դուրս է միջամտելը հոգեորսողի և հոգեորսի միջև առկա այս «բախմանը»:

Առաջին հերթին, որովհետև, հաշվի առնելով անձի արժանապատվության և ազատության նկատմամբ հարգանքը, որը ենթադրում է, որ պետությունը պետք է ընդունի, որ սկզբունքորեն ամեն ոք իրավունք ունի իր կյանքը դասավորելու այնպես, ինչպես ինքն է ճիշտ համարում, չկա որևէ արդարացում պետության համար իր իշխանությունը՝ հոգեորսության զոհ դարձած անձին «պաշտպանելու» համար օգտագործելու դեպքում (իրավիճակը կարող է այլ լինել շատ հատուկ դեպքերում, երբ պետությունն ունի հատուկ հոգածության պարտականություն, որոնց շարքին, սակայն, չի կարող դասվել ներկա գործը): Երկրորդ, նույնիսկ «հասարակական կարգի» պաշտպանության օգտին բերվող փաստարկը չի կարող արդարացնել պետության կողմից հարկադրանքի գործադրումը մի այնպիսի ոլորտում, ուր հանդուրժողականությունը պահանջում է, որպեսզի որոշիչ հանդիսանա «ազատ վիճաբանությունը և քննարկումը»: Եվ երրորդ, Կոնվենցիայի համաձայն պետության համար բոլոր կրոնները և հավատքները պետք է լինեն հավասար:

Սա վերաբերում է նաև այն պետություններին, որտեղ, ինչպես ներկա գործում, գերակայում է որոշակի կրոն: Ինչպես հաստատում է 9-րդ հոդվածի ստեղծման պատմությունը (տե՛ս, օրինակ՝ *La Convention europeenne des Droits de l'Homme*, by J.Velu and R. Ergec, Bruylant, 1990, p. 581, para.708), այն փաստը, որ համաձայն ներպետական իրավունքի, մի կրոն ունի արտոնյալ դիրք, ոչ մի կարևորություն չի ներկայացնում այս հոդվածով նախատեսված պետության պարտավորության համար:

Պետություններին թույլատրել միջամտելու հոգեորսության էությունից բխող «բախմանը» հոգեորսությունը համարելով քրեական հանցանք, ոչ միայն կնշանակի հեռանալ այս ոլորտում պետությունից պահանջվող խիստ չեզոքությունից, այլ նաև գերիշխող կրոնի առկայության պարագայում կնշանակի ստեղծել խտրականության վտանգ: Վերջին կետը խոսում կերպով արտահայտված է Դատարանի առջև գտնվող գործում:

16. Այս համատեքստում Դատարանն առաջարկում է, որ գոյություն ունի ինչպես «պատշաճ», այնպես էլ «ոչ պատշաճ» հոգեորսություն, որը կարող է քրեականացվել (կետ 48):

Ընդունելով, որ հոգեորսության ազատությունը կարող է բերել չարաշահումների, այնուամենայնիվ, վճռական հարցը կայանում է նրանում, թե արդյոք դա արդարացնում է քրեական իրավունքի դրույթի կիրառումը՝ պատժելի դարձնելով այն ամենը, ինչը որ պետության տեսանկյունից հանդիսանում է ոչ պատշաճ հոգեորսություն: Կա ամենաքիչը երկու պատճառ այս հարցին բացասական պատասխան տալու համար: Առաջինը, որ պետությունը, կապված լինելով կրոնական հարցերում խիստ չեզոքության պահանջով, չունի անհրաժեշտ չափանիշ և այդ իսկ պատճառով չի կարող ստանձնել մասնավոր կրոնական վարքագծի «պատշաճ» կամ «անպատշաճ» գնահատականը տալու պարտականություն: Նման չափանիշի բացակայությունը չի կարող քողարկվել (ինչը փորձում է անել Դատարանը) այն հարցի վերաբերյալ կիսաչեզոք թեստի օգնությանը դիմելով, թե արդյոք խնդրո առարկա հոգեորսությունը «համատեղելի է այլ անձանց մտքի, խղճի և կրոնի ազատության նկատմամբ հարգանքի իրավունքի հետ»: Սա պայմանավորված է նրանով, որ բուն խնդրի բացակայությունն արդեն ենթադրում է, որ պետությունը չունի ներքին արդարացում հոգեորսության չենթարկվելու իրավունքը հոգեորսության իրավունքի համեմատությամբ ավելի կարևորելու և, հետևաբար, քրեական օրենքի դրույթի օգնությամբ առաջինների վերջինների հաշվին պաշտպանելու համար: Երկրորդ պատճառն այն է, որ կրոնական անհանդուրժողականության աճող վտանգը հրամայական է դարձնում այս ոլորտում պետության իշխանության գործադրումն ամենախիստ կերպով սահմանափակելը: Սակայն Դատարանը՝ փորձելով այդ շրջանակները սահմանել այնպիսի անորոշ հասկացության միջոցով, ինչպիսին է «անպատշաճ հոգեորսությունը», որը չի էլ փորձում սահմանել, հասնում է հակառակ արդյունքի:

17. Արդյոք վճիռն այլ կլիներ, եթե հոգեորսությունն ուղեկցվեր «հարկադրանքով»: Ես այդպես չեմ կարծում:

Ներկա համատեքստում հարկադրանքը չի նշանակում հարկադրանքով ստիպել փոխելու կրոնը, քանի որ իրական հավատացյալները հարկադրանքի ազդեցությամբ չեն փոխում իրենց կրոնը: Այն, ինչն իրականում հանդիսանում է մեր դիտարկման առարկան, դա որևէ աղանդի միանալուն հարկադրելն է և, ի հակառակ դրա՝ հարկադրաբար աղանդի մեջ պահելը: Նույնիսկ նմանատիպ «կրոնական հարցերում հարկադրանքի» դեպքում սկզբունքորեն շահագրգիռ անձն ինքը պետք է օգնի իրեն: Համապատասխանաբար, եթե անհրաժեշտ է իրավական պաշտպանություն, այն պետք է լինի քաղաքացիական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանություն: Խիստ չեզոքության պահանջը, որ պետությունը պարտավոր է բավարարել կրոնական հարցերում, բացառում է այս հակամարտությանը քրեական իրավունքի միջոցով միջամտելը: Բացի, իհարկե, այն դեպքերից, երբ այդ հարկադրանքը, անկախ իր նպատակից, հանդիսանում է սովորական հանցագործություն, ինչպիսին է, օրինակ՝ ֆիզիկական վիրավորանքը: Նման դեպքերում, բնականաբար, պետությունը կարող է համաձայն կիրառվող քրեական իրավունքի՝ հետապնդել, և հոգեորսության ազատության վրա հիմնված պաշտպանությունը կարող է մերժվել, եթե այդ ազատությունն ակնհայտորեն չարաշահվել է: Սակայն չկա որևէ արդարացում կրոնական հարցերում հարկադրանքը per se քրեական հանցանքի հավասարեցնելու համար:

18. Արդյո՞ք չկա արդարացում նույնիսկ այն միջոցներով գործադրվող հոգեորսությունը քրեական հանցանք համարելու համար, որոնք հանդիսանում են ծանր հոգևոր հարկադրանք: Արդյո՞ք հնարավոր չէ արդարացնել այն մեթոդներով, որոնք կիրառվում են վերջին տասնամյակների ընթացքում ի հայտ եկած նոր աղանդների կողմից, մեթոդներ, որոնք հաճախ ասես մթազնում են գիտակցությունը:

Արդյո՞ք պետությունը չպետք է պաշտպանի իր քաղաքացիներին, և հատկապես իր անչափահաս քաղաքացիներին՝ այսպիսի մեթոդների կիրառումից:

Նույնիսկ եթե ապացուցվել է աղանդավորության նմանատիպ վիճարկելի մեթոդների կիրառման փաստը, ես կերկմտեի այս հարցին դրական պատասխան տալուց առաջ, քանի որ ակնհայտորեն դժվար է սահմանել, թե երբ են կրոնափոխության հոգևոր միջոցները հատում հետևողական և ինտենսիվ ուսուցման, ինչը պետք է արտոնվի, և գիտակցության մթազնեցման հավասարազոր հոգևոր հարկադրման միջև գտնվող սահմանագիծը: Ես համոզված եմ, այնուամենայնիվ, որ նմանատիպ վնասաբեր մեթոդների առկայությունն ապացուցվել է: 1984թ. ՅուՆԵՍԿ-ի պառլամենտի պատվերով կատարված՝ նոր աղանդների վերաբերյալ իր հետազոտությունում, ընդարձակ հետազոտության արդյունքում հեղինակը եկել է այն եզրակացության, որ ինչ վերաբերում է ՅուՆԵՍԿ-ին, ապա այնտեղ նմանատիպ երևույթների առկայությունը չի ապացուցվել: Յեղիակը շեշտել է, որ այս նոր աղանդներն ամենուր կատարի հակազդեցության են արժանացել, ներառյալ նմանատիպ մեթոդների մշտական քարկոծումը, սակայն Կառավարությունը մինչ այդ մերժում էր որևէ միջոցներ ձեռնարկել:

Ես պետք է ավելացնեմ, որ միգրացիոն կան հոգևոր հարկադրանքի այնպիսի մեթոդներ, որոնք հավասարազոր են գիտակցության մթազնեցմանը, որոնք վիճելիորեն մտնում են Կոնվենցիայի 3-րդ հոդվածի սահմանման մեջ և, հետևաբար, պետք է արգելվեն՝ սովորական քրեական իրավունքի համաձայն՝ դիտվելով որպես հանցանք: Սակայն այս համատեքստում, ես կուզեի շեշտել նաև, որ չկա արդարացում՝ հոգեորսության նպատակով այս մեթոդների կիրառման համար օրենսդրության հատուկ դրույթներ սահմանելու համար:

19. Ընդհանրացնելով՝ նույնիսկ եթե Կառավարության այն թեզը, որ թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժինը նախատեսված է հարկադրաբար կրոնափոխ անելուց պաշտպանելու համար, չհակասեր այդ դրույթի ձևակերպմանը (ինչն իրականում այդպես չէ), այդ արդարացումը, միևնույն է, կտապալվեր:

20. Այս հիմքերով ես գտնում եմ, որ Յունաստանը, որը, որքանով ես կարողացա պարզել, հանդիսանում է միակ անդամ պետությունը, որը հոգեորսությունը համարում է քրեական հանցանք, դրանով խախտում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը:

ՊԱՏԱՎՈՐՆԵՐ ՖՈՅԳՅԵԼԻ և ԼՈՒԻՋՈՒԻ ՄԻԱՑՅԱԼ ԶՅԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Մենք ցավում ենք, որ ներկա գործում չենք կարող համաձայնել Դատարանի մեծամասնության կարծիքին, քանի որ մեր մոտեցումն այս գործից բխող հարցն այլ է: 9-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է յուրաքանչյուր անձի մտքի, խղճի և կրոնի ազատությունը. այս իրավունքը ենթադրում է նաև անձի՝ իր կրոնը կամ հավատքը փոխելու ազատությունը և միանձնյա կամ այլոց հետ համատեղ, հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատությունն է:

Յունաստանի համապատասխան օրենքը, որը հոգեորսությունը սահմանում է որպես քրեական հանցանք, նախատեսում է հետևյալը.

«հոգեորսություն» ասելով՝ ենթադրվում է, մասնավորապես, այլ կրոնական համոզմունքներ ունեցող անձի կրոնական հավատքի նկատմամբ ոտնձգություն անելու ցանկացած ուղղակի կամ անուղղակի փորձ, նպատակ ունենալով խաբիսելու այդ հավատքը՝ կամ երաշխիքներով, կամ երաշխիքների խոստումներ տալով, կամ բարոյական սատարում ու նյութական օժանդակություն առաջարկելով, կամ խարդախ միջոցների դիմելով, կամ օգտվելով այդ անձի անփորձությունից, վստահությունից, կարիքավորությունից, ցածր մտավոր կարողություններից կամ միամտությունից»:

Մեր կարծիքով, «հոգեորսության» հանցանքի այս սահմանումը չի կարող համարվել 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Միայն հակադրվելով կրոնի իրական, բաց և

Ճշմարիտ ուսուցմանը՝ այսպիսի հարկադրական եղանակը կարող է դիտարկվել որպես քրեական հանցանք:

«Ուսուցանել» բառը ենթադրում է անկեղծություն և արդարամտություն, խարդախ և անպատշաճ միջոցների կամ կեղծ ենթատեքստի օգտագործման մերժում՝ անձի տուն ներս մտնելու համար, ինչը տեղի էր ունեցել տվյալ գործում, և ներսում հայտնվելով, չարաշահելով այդ անձի քաղաքավարությունը և հյուրընկալությունը, ինչպես նաև չխուսափելով ուսմունքի տեսական մասում հատուկ կրթություն չստացած անձի անփորձ կամ անգրագետ լինելուց՝ փորձել փոխել նրա կրոնը:

Ի հաստատումն պետք է նշել, որ «ուսուցանել» բառը պետք է մեկնաբանվի 9-րդ հոդվածի ամբողջ համատեքստում և հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանափակումների հետ համակցության մեջ, մասնավորապես, այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության առումով, որոնք, անկասկած, ներառում են իրենց կրոնը մյուսներին ուսուցանողների պարտականությունը՝ հարգել մյուսների կրոնը: Կրոնական հանդուրժողականությունը ենթադրում է հարգանք այլ անձանց կրոնական հավատքի նկատմամբ:

Եթե մեկ անձ մյուսի կրոնը փոխելու նպատակով կիրառում է այնպիսի միջոցներ, որոնք նախատեսված են մյուսին խաբելու և նրա գիտակցության վրա իշխելու համար, ապա հնարավոր չէ ենթադրել, որ այդ անձը կարող է հարգանք ցուցաբերել մյուսների իրավունքների և ազատությունների նկատմամբ: Սա անթույլատրելի է Պայմանավորվող կողմերի քաղաքակիրթ հասարակություններում: Որոշ մոլեռանդների հետևողական ջանքերը, որոնք ուղղված են մյուսներին իրենց հավատքին ներգրավելուն, և որոնք օգտագործում են անընդունելի հոգեբանական տակտիկա մարդկանց նկատմամբ, ինչը, ըստ էության, հանդիսանում է հարկադրանք, չեն կարող հասկացվել «ուսուցում» բառի բնական իմաստով, որն առկա է 9-րդ հոդվածի 1-ին կետում:

Վերոնշյալ պատճառներով մենք համարում ենք, որ հաշվի առնելով գործի հանգամանքները, 9-րդ հոդվածը չի խախտվել: